[illegible]

[illegible]

Ի 28 Սեպտեմբերի 1830.

---

[illegible]

28
Ա 49
1961 г.

# ԱՂՕԹՔՄԱՏՈՅՑ

Ծաղկաքաղ արարեալ 'ի պէսպէս
գրոց աղօթից, 'ի պէտս հասա-
րակաց Մերագնէից ։

Տպագրեալ արդեամբք և ծախիւք Մարդա-
սիրական Ճեմարանի ։

'Ի Հայրապետութեան Տեառն
Տեառն Եփրեմայ ամենայն հայոց
կաթողիկոսի ։

'Ի ԿԱԼԿԱԹԱ

'Ի Տպարանի Մարդասիրական Ճեմարանի

1827

128

# ԱՂՕԹՔ
# ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄՈՒ

Իւրաքանչիւրոց հաւատացելոց քրիստոնէից յորժամ յառնէ յանկողնոյ յառաւօտու. պարտի նախ կնքել զինքն նշանաւ տէրունեան խաչին ասելով։

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, ամէն։

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի։ զհաց մեր հանապազորդ տուր մեզ այ-

սօր. և Թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք Թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութի. այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէն: Զի քո՛ է արքայութի, և զօրութի, և փա՛ռք յաւիտեանս, ամէն:

Տէր եԹէ զշրԹունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիս քո: Օրհնեալ համագոյ և միասնական անբաժանելի սր՛բ երրորդութիդ՝ հայր և որդի և ս՛բ հոգի. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Հանգանակ հաւատոյ:

Հաւատամք 'ի մի աստուած հայրն ամենակալ. յարարիչն երկնի և երկրի. երևելեաց և աներևութից: Եւ 'ի մի տր՛ յիսուս քրիստոս որդին աստուծոյ. ծնեալ յաստուծոյ հօրէ միածին. այսինքն յէութենէ հօր: Աստուած յաստուծոյ. Լոյս 'ի լուսոյ. ա՛ծ ճշմարիտ

յաստուածոյ ճշմարտէ։ Ծնունդ և
ոչ արարած։ Նոյն ինքն ՚ի բնութենէ
հօր. որով ամ՟ ինչ եղև յերկինս և ՚ի
վ՟ր երկրի. երևելիք և աներևոյթք։ Որ
յաղագս մեր մարդկան և վասն մերոյ
փրկութե՟ իջեալ ՚ի յերկնից մարմնացաւ
մարդացաւ ծնաւ կատարելապէս ՚ի մա-
րիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով։
Որով էառ զմարմին զհոգի և զմիտ.
և զամենայն որ ինչ է ՚ի մարդ. ճշմար-
տապէս և ոչ կարծեօք։ Չարչարեալ,
խաչեալ, թաղեալ. յերրորդ աւուր
յարուցեալ. ելեալ ՚ի յերկինս նո-
վին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ հօր։
Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր
՚ի դատել զկենդանիս և զմեռեալս.
որոյ թագաւորութե՟ն ոչ գոյ վախճան։
Հաւատամք և ՚ի ս՟բ հոգին. յանեղն և
՚ի կատարեալն։ Որ խօսեցաւ յօրէնս
և ՚ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն
՚ի յորդանան. քարոզեաց զառաքեալսն.
և բնակեցաւ ՚ի սուրբսն։ Հաւատամք

և ՚ի մի միայն ընդհանրական և յառաքելական Եկեղեցւոյ ։ ՚Ի մի մկրտութի · յապաշխարութի · ՚ի քաւութի և ՚ի թողութի մեղաց ։ ՚Ի յարութի մեռելոց · ՚ի դատաստանն յաւիտենից · հոգւոց և մարմնոց ։ Յարքայութին երկնից և ՚ի կեանսն յաւիտենականս ։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր որդի · կամ էր երբեմն յորժամ ոչ էր սուրբ հոգի · կամ թէ՝ յոչ էից եղեն կամ յայլմէ էութէ ասեն լինել զորդին աստուծոյ և կամ զսուրբ հոգին ։ Եւ թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք՝ զայնպիսին նզովէ կաթուղիկէ և առաքելական սուրբ եկեղեցի ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս · երկիրպագանելով սրբոյ երրորդութեանն · և միոյ աստուածութեանն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

Գոհանամ զքէն տր իմ և ած իմ, և

օրհնեմ և փառաւորեմ զսբ անուն քո· որ պահեցեր զանարժանս և զմեղաւոր ծառայս քո ՚ի գիշերիս յայսմիկ յամենայն վտանգից և ՚ի փորձութեց· և հասուցեր խաղաղութբ ՚ի ժամ առաւօտուս , և արժանաւորեցեր տեսանել զլոյս ողորմութեան քո ։

Եւ այժմ աղաչեմ զքեզ տր իմ և ած իմ· պահեա զիս և ՚ի տուընջեանս յայսմիկ նոյն ամենազօր աջովդ· և փրկեա յամենայն վնասաբեր պատահմանց· ՚ի յերևելի և յաներևոյթ թշնամեաց , և յամ մեղսաւորիթ խորհրդոց՝ բանից և գործոց ։ Եւ զգնացս իմ ուղիղ արացի մի՛ տիրեսցէ ինձ ամ մեղք։

Առաջնորդեա ինձ ՚ի խորհուրդս բարիս՝ ՚ի բանս ճշմարիտս , և ՚ի գործս անմեղածինս և օգտակարս ։

Դու լեր վերակացու և առաջնորդ խաղաղական ծառայիս քո յամ գնացս իմ. և փրկեա ՚ի գայթակղութե դիւին ՚ի հանապազ աւուրս . և զգործս ձեռաց ի-

մոյ ուղիղ արա և յաջողեա ինձ։ Եւ դու պատրաստեա զպիտոյս հոգւոյ և մարմնոյ իմոյ։ Եւ հասո՛ խաղաղութ̄՝ առանց մեղաց և փորձանաց ՚ի ժամ երեկոյին։ Զի և յայնմ ժամու փառաւորեցից զս̃բ երրորդութիւնդ՝ որում միշտ վայելէ փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

## Աղօթք վասն հասարակաց ննջեցելոց, և [illegible] վասն ընտանեաց և երախտաւորաց։

Այլ և՝ աղաչեմ և խնդրեմ ՚ի քէն տէ՛ր բազմագութ ա̄ծ՝ վասն ազգիս մերոյ հնոց և նորոց և համօրէն հաւատոց և յուսով ՚ի քեզ ննջեցելոյն։ Եւ մանաւանդ՝ վն̄ իմոյ մարմնաւոր և հոգևոր ծնողաց. եղբարց. քերց. ազգականաց, սիրելեաց և բարեկամաց. և հոգևոր վարդապետաց. ՚ի բարիս կրթողաց և ուսուցչաց. և ամ̄ աշխատաւորաց և երախտաւորաց մերոց՝ ՚ի քեզ ննջեցելոց։ Զորս յիշեայս յողորմու-

Թիս քոյ յաւուր մեծի գալստեան քոյ Թողութ շնորհեսցես ամ մեղաց և սը- խալանաց նոցին. և դասեսցես ընդ սբս քո յաջակողմեան դասուն. և տացես լը- սել զերանաւէտ բարբառն քո թէ՝ ե- կայք օրհնեալք Հօր իմոյ ։ Եւ ըստ ե- րախտեաց նոցին որ առ մեզ՝ միոյն բիւ- րապատիկս հատուսցես 'ի հոգիս նց. և զմեզ անդատապարտ արասցես 'ի նո- յին պարտուցն. և քեզ փառք յաւի- տեանս յաւիտենից, ամէն ։

Աղօթք վասն ընտանեաց և թշնամեաց ։

Արդ՝ ո՛վ ողորմած և բազմագութ ած իմ յս քս. վասն իմոյ ընտանեաց և բարեկամաց խնդրեմ զբարիս և զո- ղորմութիւնս 'ի քէն՝ որպ հաճոյ է, և պահանջէ օգուտն բնութեան մերոյ ։ Այժմ աղաչեմ զքեզ և վասն իմոյ թշնամեաց. որպ և դու իսկ ասացեր օրհնեալ բե- րանովդ թէ բարի արարէք ատելեաց ձե-

րոց ։ Ուրեմն՝ անկեալ առաջի քո խնդ-
րեմ յամենառատ ողորմութենէդ, զի ողոր-
մեսցիս և իմոյ ամենից թշնամեաց և ա-
տողաց․ չարակամաց և զրպարտողաց․
և այլոց ամենեցուն՝ որք զծառայէս
քումմէ զչարիս խորհին և խօսին գոր-
ծեն, և գործել կամին․ և որք բամ-
բասեն՝ վատաբանեն, և հայհոյեն զիս՝
թէ իրաւամբ, և թէ անիրաւամբ․ մի՛
բարկանար նոցա վասն իմ՝ Տր իմ․ այլ՝
ներեա՛ և թող զմեղս նոցա ։

Քանզի՝ նոքա առ իս մեղանչեն՝ որ յի-
րաւի մեղաւոր եմ՝ և արժանի ամ բամ-
բասանաց և նախատանաց ։ Իսկ առ քեզ
մեղանչեմ՝ որ արդար ես յամի, և միշտ
բարերար ինձ ։ Ուրեմն՝ եթէ նոքա ար-
ժանիք են բարկութե քոյ, ապա՝ բիւրա-
պատիկ ես եմ որդի բարկութե և ար-
ժանի պատժոյ քան զնոսա ։

Վասն այսորիկ՝ աղաչեմ զքեզ Տր
իմ՝ որ ես աղբիւր ամ բարութե՝ և ծով
անհուն ողորմութե․ զի ողորմեսցիս նց՝

և. ինձ ընդ նոսա. և ներեսցես ամենից սխալանաց՝ որք առ իս. և դարձուսցես զնոսա 'ի չարեաց փոխարկելով 'ի բարիս: Որպէս զի ամենեքեան զգաստացեալք՝ ըստ հաճոյից քոյ գնասցուք. և փառս վերառաքեսցուք քեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Աղօթք առ սուրբ երրորդութիւնն զոր Տր Ճառընտ ձայնէ ադորոշին Վարդ Պեղոյ. այլ ներբելով փառացէ շնորհամարչանութի 'ի կաշօրէն:

'Ի սկսանելն, խաչակնքեա զդէմս երիցս ասելով

Օրհնեալ ես Հայր սբ ած ճշմարիտ օրհնեալ ես Որդիդ սուրբ ած ճշմարիտ օրհնեալ ես Հոգիդ սուրբ ած ճշմարիտ: Օրհնեալ ես ամենասուրբ երրորդութիւն և մի ածութիւն, արարիչ և նախախնամօղ ամ արարածոց երևելեաց և աներևութից՝ քաւիչ և նե-

րօղ ամենայն մեղաւորաց՝ փրկիչ և կեցուցիչ ամենայն նեղելոց և վտանգաւորաց՝ որք կարդան առ քեզ ։ Յոր և ես ամենաթշուառ ծառայս քո՝ հաւատամ, խոստովանիմ և երկիրպագանեմ ։ Յորմէ և յուսամ ընդունիլ զթողութիւն մեղաց իմոց. և զմաքրութիւն հոգւոյ և մարմնոյ իմոյ ։

Եւ արդ՝ անկեալ առաջի ամենասուրբ բոյ երրորդութեանդ և միոյ աստուածութեանդ, աղաչեմ զքեզ մեծաւ հառաչմամբ անօխակալ տէր իմ տուր ինձ համարձակութիւն, մատչիլ առ աղբիւրդ կենաց. և գտանել ՚ի քէն զողորմութիւն ։ Մի՛ բարկանար ինձ վասն բազում մեղաց իմոց, և մի՛ յիշեր զանթիւ չարիսն իմ որ առ քեզ. մի՛ մատներ ՚ի դատաստան ընդ ամենամեղ ծառայիս. որ ահա ես ինձէն դիտելով զյամի յանցաւոր զոգին իմ, դիտելով և զանյիշաչարութիւն Աստուծոյ իմոյ՝ դիտեմ առ քեզ ։ Արդ՝ հայցեմ ողորմութեան ՚ի ծառայս քո, և տուր քաղց-

րութեան, զի՞նչ կամիս զի արարից քեզ։

Իսկ եթէ արդարութեամբ 'ի դատ մըտեալ քննել կամիցիս մի ըստ միոջէ զանօրէնութիւնս իմ, ես ո՞չ կարեմ կեալ առաջի քոյ, և կամ՝ ո՞չ կարեմ արդարացուցանել զիս։

Քանզի՝ դու ստեղծօղդ իմ գիտես զամենասխալ բնութիւնս իմ, և վկայեցեր իսկ ամենաճշմարիտ բերանովդ թէ չար է արարք մարդոյ, և ընդաբոյս է չարութիւն. և թէ՝ միտք մարդոյ հաստատեալ են 'ի խնամս չարին։ Եւ ես գիտեմ, և վկայեմ ճշմարտութեամբ. զի անօրէնութեամբ յղացայ, և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ. ըստ բանի դաւթի ծառային քո։

Արդ՝ անօրէնութեամբ յղացեալս 'ի բնէ անտի՝ և 'ի մեղս ծնեալս, ո՞րպէս կարէ արդարանալ առաջի քոյ. և ո՞չ կարէ կեալ՝ եթէ դու ողորմութեամբ քով ո՛չ օգնեսցես։ Ո՞չ և դաւիթ ասէր, եթէ՝ ո՛չ տէր օգնեալ էր ինձ, բնակեալ էր անձն իմ 'ի դժոխս։ Եւ յորժամ սը-

խաւլէի և անկանիլ կամէի , ողորմութ֟
նորա օգնէր ինձ ։ Ահա այս ողորմութիւ֊
է՝ որ տայ մեղաւորաց յոյս , և համար֊
ձակեցուցանէ մատչիլ առ քեզ ։ Այս
ողորմութի է՝ որ բանայ զլեզուս համրա֊
ցելոց մեղօք՝ 'ի կարդալ առ քեզ և գը֊
տանել 'ի քէն զճար փրկութ֟ ։ Այս
ողորմութի է՝ որ դարձուցանէ զբար֊
կութիւն քո 'ի քաղցրութի ։

Արդ՝ տր֟ իմ արդար և ողորմած ․ և
ես անօրինեալ ծառայս քո՝ յայս յողոր֊
մութիս քո ապաւինեալ՝ մատչիմ առ քեզ ․
և այսու ողորմութ֟ իբրու վահանաւ ամ֊
րափակեմ զիս յահէ արդարութեդ ․ և
իբր փախստական անկանիմ առաջի ա֊
թոռոյ ողորմածիդ քոյ ․ և խնդրեմ , զի
մի՛ արդարութեդ մատնեսցես զիս ․ այլ ո֊
ղորմութեդ յանձն արարեալ պատսպարես֊
ցես զիս ․ և մի՛ ըստ արժարութեդ դար֊
ձուսցանիցես զերեսս քո յինէն , այլ ող֟
ողորմութեդ՝ 'ի մեղաց իմոց դարձուսցես
զերեսս քո 'ի յոչ տեսանել զնոսա ․ և

ասասցես յորդորական և գթալիր բար-
բառով թէ՝ զի՞նչ կամիս զի արարից
քեզ։ Եւ ես խոնարհեցուցեալ զգլ-
լուխս իմ, ասեմ թէ՝ լուիցես զաղա-
չանս ծառայիս քո. և քաղցրութեամբ
կատարեսցես զխնդրուածս իմ որ ահա
մատուցանեմ քեզ։ Զի և ես ողորմե-
լիս ողորմեալ 'ի յողորմած այդ իմմէ
փառաւորեցից զՀայր և զՈրդի և զՍուրբ
Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից, ամէն։

Աղերս յանձն առնելոյ զինքն [illegible] առաւել առ
[illegible] կուսին Մարիամ Աստուածածնին։

Ով ամենասրբուհի կոյս մարիամ,
մայր ԱԾ թագուհի երկնից, բարե-
խօսդ մեղաւորաց, և ապաւէնդ վըշ-
տացելոց, թէպէտ ես ամենախմբ եմ
անարժան գոլոյ քոյդ ծառայ. սակայն
շարժեցեալ 'ի յորդորմէ քեզ ծառայելոյ,
և ապաւինեցեալ 'ի քոյդ ամենամեծ

առաքինութ՟ն , ընտրեցի զքեզ այսօր առաջի պահապանի իմոյ հրեշտակի , և առաջի հանուրց զօրաց երկնայնոց ինձ 'ի սեփական տիրուհութիւն , 'ի նպաստուհի , և 'ի մայրուհի . և հաստատապէս յառաջադրեմ միշտ ծառայել քեզ յօժարութ՟բ կամաց . և առնել , զի և այլք նմանապ՟ս ծառայիցեն քեզ ։ Արդ՝ մաղթեմ 'ի քէն ով ամենաբարեգութ մայր, միջնորդութ՟բ պատուականի արեան որդւոյ քո միածնի ցօղեցելոյ վ՟ն իմ յերկիր , զի ընկալցիս զիս 'ի թիւս այլոց քոյոց ջերմեռանդից պաշտողաց , 'ի ծառայութ՟ն մշտնջենական . և այց առնիցես ինձ յիմս գործառնութիւնս ։ Քաւեա՛ ուրեմ՟ն վ՟ն իմ զշնորհս գործունեայս , որովք մարթիցիմ այնպէս կենցաղավարիլ ընդ բնաւս խոկմունս . ՟ը բանս և ՟ը գործս , մինչ զի ոչ իւիք անհաճոյ գտանիցիմ յաչս քոյս ամենամաքուրս , և ոչ իւիք յանցաւոր առաջի որդւոյ քո միածնի ։

Յիշեա՛ զիս ով մայր ողորմութեան, և մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց 'ի ժամու մահուան իմոյ, մինչև չու լիցէ հոգի իմ յայսմանէ տառապանաց մարմնոյ ճշմարտիւ ապաշխարութեամբ իւրոյն յանցանաց, ամէն:

## Աղօթք առ սուրբ Աստուածածինն:

Ո՛վ սրբուհի կոյս մարիամ, քաղցրագունեղ թագուհի շնորհաց. բարեխօսդ մեղաւորաց, և ապաւէնդ վշտացելոց. կարկառեա՛ զաջս քոյոյ բարեգթութեան 'ի յաղաչանս խոստանի քոյոյ ծառայի, և տո՛ւր ինձ շնորհիւ քում համարիլ 'ի թիւս քոյոց սիրելեաց, և պահպանեա՛ զիս 'ի մէջ քոյոց կուսականաց գրկաց: Ո՛վ մաքրագունեղ կոյս մաքրեա՛ զսիրտ իմ յամենից մեղաց. բա՛րձ և տարամերժեա՛ յինէն զամենայն ինչ, որ անհաճոյ է առաջի քոյոց աչաց: Սրբեա՛ զհոգի իմ յամենից ցան-

կութեանց երկրայնոց, և վերացո՛ ՝ի սէրն երկնայնոց բարեաց. և մշտնջենականաց։ Ո՛վ ամենասրբուհի կոյս, բարեխօս լեր վասն իմ առ որդիդ քո այժմ և միշտ, և ըն կիտում մահուան իմոյ, զի միջնորդութ՟ քով զերծանիցիմ ՝ի հրոյն յաւիտենականէ, և զկնի այսորիկ Թշուառացելոյ կենցաղոյս քե զմայլեցից ՝ի դրախտին. մի՛ ուրեմն դարձուցանիցես ո՛վ կոյս ամենամաքուր զաչս քոյոց շնորհաց յինէն յանցաւորէ. զի յանձն առնեմ զհոգի և զմարմին իմ քում բարեգթութ՟։ Փութացի՛ր զերծուցանել զիս ՝ի բնաւից չարեաց, և ՝ի կասկածանաց այսորիկ կենցաղոյս. և հաճեա՛ց բարեխօսել վասն իմ առ որդիդ քո միածին, զի շնորհիցէ ինձ զներումն յանցանաց. զճշմարիտ հաւատ, զյոյս հաստատուն, և զսէր ջերմեռանդ. զշնորհս իսկ հոգւոյն սրբոյ, առ ՝ի առնել միշտ զսրբագունեղ հաճութ՟ իւր. այլ և կամիցի իւրով բա-

րեգթութն պահպանել զքաղաքս զայս 'ի պատերազմէ, 'ի մահուանէ, և 'ի սովոյ, և ազատեսցէ զիս և զբնաւ ազգայինս, և զբարեկամս, իսկ և ընդ-հանուրս հաւատարիմս քրիստոնեայս յա-մենից չարեաց, ամէն :

Զերկրպագութիւն առ եօթն վիշտս Գլխաւորս ամենասրբուհւոյ կուսին Տիրամօրն :

## Առաջին վիշտն :

Երկրպագեմ քեզ Տր իմ Յս Քս, և աղաչեմ՝ զքեզ յիշատակաւ սրոյն այ-նորիկ սրագունեղի. որ թափանցեաց 'ի սիրտ ամենասրբուհւոյ մօր քոյ և կու-սի, մինչ յայտնեցաւ նմա 'ի ծերուն-ւոյն սիմէօնէ չարչարելութն քո կարծ-րագոյն, մահ քո խստագոյն. զի հա-ճեսցես շնորհել ինձ զկատարեալ ճա-նաչելութն, և զճշմարիտ ապաշխա-րութն իմոցն յանցանաց : Հայր մեր : Աղ

ջոյն քեզ մարիամ՝ լի շնորհօք, ուրախ լեր բերկրեալ տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս՝ և օրհնեալ է պտուղ որովայնի քո յիսուս. սրբուհի մարիամ մայր այ՝ բարեխօսեա՛ վասն մեր մեղաւորացս, այժմ՝ և 'ի ժամ մահու մերոյ, ամէն:

Ա– երկրորդ գէտն ։

Երկրպագեմ քեզ Տր իմ Յս Քս, և աղաչեմ զքեզ միջնորդութբ վշտին այնորիկ, զոր կրեաց մայր քո ամենօրհնեցեալ, մինչ ազդեցութբ հրեշտակին փախչելով 'ի հալածմանէ հերովդէի, ընդ սրբոյն յովսեփայ իւրում մաքրագունեղի փեսային, էած զքեզ 'ի յեգիպտոս. յանձն առնելով զմեծամեծ տառապանս 'ի Ճանապարհի, զի հաճեսցիս շնորհել ինձ զօգնութիւն ընդդէմ փորձութեանց և զնպաստութիւն ընդդէմ պատրանաց և խաբէութեանց

Թշնամւոյն դժոխային ։ Հայր մեր ։
Ողջոյն քեզ ։

Առ երրորդ վէրն ։

Երկրպագեմ քեզ Տր իմ Յս Քս, և աղաչեմ զքեզ միջնորդութբ վիրին այնորիկ, զոր կրեաց ամենասրբուհի մայր քո ՝ի ժամուն յայնմիկ ․ նորում իբր կորուսեալ համարէր ըզքեզ ․ մինչև եգիտ զքեզ ՝ի տաճարին՝ յորում վիճաբանէիր ընդ գիտնոց ․ զի հաճիցիս շնորհել ինձ զկատարեալ ներումն իմոյ բնաւից յանցանաց և սրբել զհոգի իմ քոյով ածայնով շնորհիւ ։ Հայր մեր ։ Ողջոյն քեզ ։

Առ չորրորդ վէրն ։

Երկրպագեմ քեզ Տր իմ Յս Քս, և աղաչեմ զքեզ միջնորդութեամբ մեծագունեղի վիրին այնորիկ, զոր ընկա-

բաւ ամենասրբուհի մայր քո, մինչ գուժեցեալ եղև նմա դառնագունեղ լուրն այն, թէ պաշարեցեալ էիր դու 'ի չարագործաց. ըմբռնեցեալ յանհաւատից յուդայեցւոց, ամբարշտացն կապեցեալ, խստաբարոյիցն ձաղեցեալ. և փշով պսակեցեալ. զի հաճեսցիս առատաձեռնել ինձ զշնորհս առ 'ի ծառայել քեզ. մաքրութբ̃, խոնարհութեամբ, և երկայնմտութբ̃ մինչև 'ի վախճան ։ Հայր մեր ։ Ողջոյն ։

## Առ հինգերորդ վէրն ։

Երկրպագեմ քեզ Տր̃ իմ Յս̃ Քս̃, և աղաչեմ զքեզ միջնորդութբ̃ կարծրագունեղի վիրին այնորիկ. զոր կրեաց ամենասրբուհի մայր քո, մինչ ետես զքեզ 'ի կրելն 'ի վերայ սրբազնագունեղից ուսոց քոց զծանրաբեռնութիւն սրբոյ խաչին. զոր բարձեալ տանէիր 'ի լեառն կառափելոյն, զի հաճեսցիս

պարգևել ինձ զճշմարիտ ապաշխարութիւն. և 'ի վշտակրութեան քում ա̃ծայնոյ հանդիսավէհութ̃ն իմոյ անձին յանձնարարութիւն։ Հայր մեր։

Ողջոյն քեզ։

Ա. վեցերորդ վէրն։

Երկրպագեմ քեզ Տ̃ր իմ Յ̃ս Ք̃ս, և աղաչեմ զքեզ միջնորդութ̃բ սաստկագունեղի վիրին այնորիկ, զոր կըրեալ ամենասրբուհի և ցաւագնեցեալ մայրն քո, մինչ ետես զքեզ 'ի մեծամեծս չարչարանս, բևեռեցեալ 'ի վե̃ր սրբոյ խաչափայտին. յորում սրագունեղին բևեռիւք ձեռք քոյք սրբազնագունեղք և ոտք էին սևեռեցեալք, և բարձրացուցեալ 'ի վեր 'ի նշաւակ բոլորի աշխարհի. զի հաճիցես տալ ինձ զշնորհս, որովք յառաջ քան մեռանիլն իմ կարիցեմ ընդունիլ ջերմեռանդապէս և արժանապէս զսրբազ-

նութեն քոյոյ արբագոունեղի և կատա-
րելագոունեղի մարմնոյ և արեան, և մե-
ռանիլ հաւատարմապէս ՚ի մէջ քոյոյ
բազկաց ։ Հայր մեր ։ Ողջոյն քեզ ։

Ա· ԷՕՐՀՆԷՐՈՒՐ ՉԷՐՆ ։

Երկրպագեմ քեզ Տր իմ Յս Քս, և աղաչեմ զքեզ միջնորդութ կարծրա- գոունեղի վիրին այնորիկ, զոր կրեաց ա- մենապարբուհի մայր քո վշտագնեցեալ. մինչ ետես զքեզ մեռեալ և թաղեցեալ բոլորովին խոցոտեցեալ. և ողբեղա- ցեալ, զի հաճիցիս ՚ի վախճանի կենաց իմոց մխիթարել զիս քոյով շնորհիւ, և տալ ինձ վայելել զքեզ զկնի մա- հուան իմոյ, ՚ի փառս յաւիտենականս ։ Հայր մեր ։ Ողջոյն քեզ ։

Աղօթք առ թագուհի Աստուածածնին ։

Ով ամենապարբուհի կոյս, ով մայր ողորմութե. և ապաւէն մեզ թշուառից մեղաւորաց, աղաչեմ զքեզ ՚ի ձեռն այ-

Նոյնպէս վշտաց քոց․ որոց ՚ի մեծաբանս լատ խմ՛ում կարի և ըղձի մատուցի զաղօթս վերոգրեցեալս․ զի հաճիցիս մաղթել վս խմ՝ ՚ի սիրեցելոյ որդւոյ քումմէ զճշմարիտ կատարութիւն յանցանաց խմոց անցելոց, և զյարատևութիւն յիւրում սրբազանի պաշտաման ՚ի փառս տեառն մյ օրհնեցելոյ ՚ի յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

Զերեկոնութիւն առ եօթն խնդութիւնս․ ա-
րողէ շնայլէ փերուսին ներ ՚ի յերկինս։

Առաջին խնդութիւնն։

Խնդա՛ ով Հարսն անարատ Հոգւոյն սբյ, Հանդերձ բերկրանօքն, զորս ունէիր արդ ՚ի դրախտին։ Քանզի սակս քոյոյ իսկականի մաքրութեան և կուսութեան բարձրացար ՚ի վեր քան զհրեշտակս, և գերակայացար ՚ի վեր քան զամն սբս։

Ողջոյն քեզ Մարիամ՝։

### Առ Երկրորդ Խնդութիւնն ։

Խնդա՛ ո՛վ ճշմարիտ մայր ա̃յ հանդերձ զուարճութեամբն · զոր ունիս 'ի դրախտին ։ Քանզի որպէս արեգակն աստ 'ի յերկրի լուսաւորէ զբոլոր աշխարհ · այսպէս դու քոյովք ճառագայթիւք զարդարես և պայծառացուցանես զդրախտն բոլոր ։ Ողջոյն քեզ ։

### Առ Երրորդ Խնդութիւնն ։

Խնդա՛ ո՛վ ճշմարիտ դուստր աստուծոյ հանդերձ հրճուանօքն · զոր ունիս արդ 'ի դրախտին ։ Քանզի հանուրք քահանայապետութի̃ք հրեշտակաց · և հրեշտակապետաց · աթոռոց և տէրութեանց · և համայնք հոգիք երանելեաց պատուեն, և մեծարեն ըզքեզ · և վերաճանաչեն իբր մայր ստեղծողին իւրեանց, հպատակին իսկ յա̃մեւմ քում նշմարութե̃ ։ Ողջոյն քեզ ։

## Ա. ՉՈՐՐՈՐԴ ԽՆԴՈՒԹԵԱՆ ։

Խնդա՛ ո՛վ աղախին ամենասրբոյ Երրորդութեան, հանդերձ ուրախութեամբն · զոր ունիս 'ի դրախտին ։ Քանզի ընդ-բնաւս շնորհս, զորս հայցես 'ի քումմէ քաղցրագունեղէ, և հնազանդագունեղէ որդւոյ, իսկոյն քեզ շնորհին ։ Եւ մանաւանդ որպէս ասէ Ս͞բն Բեռնարդոս · ո՛չ ումեք աստ 'ի յերկրի զեղանի շնորհ, եթէ ո՛չ նախանցանիցէ 'ի ձեռանէ քումմէ գերամեծարէ ։ Ողջոյն քեզ Մարիամ ։

## Ա. ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՆԴՈՒԹԵԱՆ ։

Խնդա՛ ո՛վ իշխանուհի պարգևագունեղ հանդերձ բերկրանօքն, զորս ունիս 'ի դրախտին ։ Քանզի դու միայն արդիւնաւորեցար գոլ ընդունակ այսքանում արժանապատուութեան, 'ի մէջ հանուրց երանելեաց, որք են 'ի յեր-

կենս, և կաս մերձաւորագոյն քան զայլս առ ամենասբ երրորդութեն ։ Ողջոյն ։

### Առ վեցերորդ խնդրուածն ։

Խնդա՛ ո՛վ յոյսդ մեղաւորաց և ապաւէնդ վշտացելոց հանդերձ զուարճութեամբն, զոր ունիս ՚ի դրախտին ։ Քանզի զընաւս քոյս ծառայս ջերմեռանդս, որք գովաբանեն և վերյարգեն զքեզ յայսմիկ աշխարհի, վարձատրելոց է հայրն յաւիտենական իւրով սրբազնագունեղիւ շնորհիւ, և ՚ի հանդերձելումն իւրովք սրբազնագունեղիւք փառօք ։ Ողջոյն քեզ ։

### Առ եօթներորդ խնդրուածն ։

Խնդա՛ ո՛վ մայր, դուստր և հարսն այ ։ Քանզի համայնք շնորհք և բերկրութիւնք որովք զմայլիս ՚ի դրախտին, ո՛չ երբէք են նուազելոցք, այլ մնա-

ւանդ Ճոխանալոյք մինչև յօր դատաստանի, և յարամնալոյք 'ի յաւիտեանս յաւիտենից. ամէն: Ողջոյն քեզ:

## Աղօթք առ ամենասուրբ Ածածին Մարիամ:

Յետ այսքան վշտագնեալ անձամբ՝ բաղխելոյ զդուռն ողորմութեն այ մերոյ և միածնի որդւոյ քոյ Յի Քի, այժմ լալագին դիմօք առ քեզ դիմեմ՝ զմաքուր ոտիւք քովք փարիմ և բաղխեմ զդուռն մօրդ ողորմութեան՝ ով ամենաօրհնեալ սբ Աստուածածին Մարիամ: Եւ զոր ինչ 'ի յորդւոյ քումմէ խնդրեցի, խնդրեմ և 'ի քէն. և զորս յուսացայ գտանել 'ի նմանէ, յուսամ և 'ի քէն գտանել:

Քանզի դու հարսն եղեր Այ հօրն ամենակալի՝ որ յամենայնի կարող է և բաւական:

Մայր եղեր որդւոյն այ, որ յամե ողորմած է և մարդասէր:

Բնակարան եղեր Հոգւոյն ս՟բյ՝ որ յա-
մենայնի հարուստ է և առատ ։

Միանգամայն շտեմարան և գանձա-
րան եղեր ամենասրբոյ Երրորդութ՟են՝
որ աղբիւր է ա՟մ բարութեանց և լու-
ցիչ երկնաւորաց և երկրաւորաց ։

Արդ՝ ո՛վ ս՟բ Ա՟ծածին Մարիամ ։
Հայրն Ա՟ծ որ այնքան սիրեաց զքեզ,
մինչ զի՝ զմիակ միածին որդին իւր՝ ո-
րոշարար զա՟մ արարածս, քեզ շնոր-
հեաց և որդի քո արար ․ այլ զի՞նչ ի-
ցէ խնայելոյ ՚ի քէն ։ Որդին Ա՟ծ՝ որ
այնքան սիրեաց զքեզ, մինչ զի՝ բնակե-
ցաւ յարգանտի քում, բազմեցաւ ՚ի
գիրկս քոյ ․ և որ կերակրիչն էր ա՟մի,
կերակրեցաւ ՚ի ստեանց քոց ․ և որ
ա՟ծ և տէր էր քո, եղև որդի քո՝ և
կոչեաց զքեզ մայր ․ այլ զի՞նչ խնդ-
րիցես ՚ի նմանէ զոր խնայիցէ ՚ի քէն ։
Եւ Հոգին Ա՟ծ՝ որ այնքան սիրեաց ըզ-
քեզ, մինչ զի՝ զէակիցն իւր քեզ հա-
ւատայ ․ և ինքն որ զարդարիչն է ա՟մի՝

հանգեաւ 'ի քեզ, և արար զքեզ օթա-
րան անապականելի շնորհացն իւրոյ. այլ
զի՞նչ մնայցէ պակաս զոր ոչ ունիցիս
դու ։

Քանզի հաւատամ ճշմարտիւ. զի
ըստ բանի հրեշտակին, տէրն և ած
շնորհաց տուողն ընդ քեզ է՝ և որդի
քո. և 'ի գիրկս քո ունիս ։ Եւ զոր
որդիդ քո ունի քո է. և զոր ինչ
խնդրիցես 'ի դմանէ, ոչ խնայէ, և
դու ում կամիցիս, կարող ես տալ ։
Որպէս և որդին քո ասէ բերանով սո-
ղոմոնի թէ՝ խնդրեա՛ մայր իմ. զի զոր
ինչ և խնդրիցես, ոչ դարձուցից զե-
րեսս իմ ։

Ուրեմն՝ ո՛վ տր Ածածին Մարիամ.
զկնի այ՝ դու ես ակնկալութի արարա-
ծոց նորին ։ Դու ես ուրախութի տրտ-
մեցելոց. փրկիչ փորձանաւորաց. օգ-
նական և մխիթարութիւն հաւատացե-
լոց. և յոյս և ապաւէն մեղաւորաց ։

Այսու մտօք՝ և սիրել՝ որդին քո՝ ի

խաչին՝ իբրև զկտակ աւանդեաց քեզ զհաւատացեալս իւր 'ի ձեռն յօհաննու. ասելով թէ՝ կին դու՝ ահա որդի քո: Իբր թէ՝ հաւատացեալքս իմ, քո են. և քեզ են յանձին այսուհետև: Նոյնպէս՝ և անուամբն յօհաննու՝ մեզ հաւատացելոցս ասաց թէ ահա մայր ձեր. զոր ինչ և կամիցիք, 'ի դմանէ խնդրեցէք այսուհետև:

Որդ՝ ով մայր ողորմութեան սուրբ Ա̃ծածին Մարիամ. և ես մի եմ 'ի հաւատացելոցն սիրեցելոց որդւոյ քոյ: Որ գոլով ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ողորմելի՝ և յամի պակասաւոր, կարօտիմ քում մայրական գթութեան: Նեղեալ և վշտացեալ 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր թշնամեաց, կարօտ քում օգնականութե̃ն: Մեղաւոր և յամի յանցաւոր, կարօտ քում ձեռնտուութեան և յուսատրութեան:

Վասնորոյ՝ անկանիմ առաջի քո ով սուրբ Ա̃ծածին և աղաչեմ զքեզ:

Ուրախացո՛ զտառապեալ ծառայս քո և մխիթարեա՛ լի՛ց զպակասութիւնս հոգւոյ և մարմնոյ իմոյ՝ քոյով աննուազելի շնորհօքդ· փրկեա՛ զիս՝ ՚ի հոգե-որ և ՚ի մարմնաւոր Թշնամեաց և յամենից փորձութեց՝ քոյով անտկարանալի զօրութեամբդ ։

Սրբեա՛ և մաքրեա՛ զիս յամենից մեղաց իմոց՝ քոյով սուրբ և անարատ կուսութեամբդ ։

Եւ լե՛ր միջնորդ և բարեխօս առ միածին որդին քո վասն իմ մեղաւոր ծառայիս· զի ընկալցի զաղաչանս իմ, զոր մատուցի նմա· և կատարեսցէ ըզխնդրուածս իմ ։ Ներեսցէ սխալանաց՝ և Թողութիւն շնորհեսցէ ա̅մ մեղաց իմոց· ընկալցի զիս վերստին ՚ի սէր ն ՚ի խնամս իւր· և պահեսցէ զիս ը̅ս հաճոյից կամաց իւրոյ, որքան ՚ի մարմնի եմ ։ Եւ յետ աստեացս՝ արժանացուսցէ իւրոյ օրհնեալ տեսութեանն ։

Քանզի՝ հաւատամ՝ անկարծիք՝ ո՛վ

Մայր ողորմութեան զի եթէ անգամ մի ակն ածիցես վասն իմ՝ առ որդիդ քո սիրելի, ուրախութիւն է ինձ լիովին՝ և յաւիտեան ապահովութիւն ։ Եթէ անգամ մի՝ զմաքուր ստինսդ ցուցցես նմա, բաւական փրկութիւն է ինձ՝ և յաւիտեան ազատութիւն ։ Եւ եթէ զշիթ մի ՚ի սուրբ արտասուացդ՝ (զոր հեղեր ՚ի ժամ խաչելութեան նորա,) ՚ի յիշումն ածիցես նմա, թողութիւն է ամենայն մեղաց իմոց՝ և բոլորովին կեանք յաւիտենական ։ Որք քեզ առատագթոյ մօրդ ողորմութեան՝ ամենայն դիւրինք և կարելիք են. և ինձ ողորմելւոյ ծառայիս քոյ՝ ամենայն պիտանիք և հարկաւորք ։ Եւ իմ՝ գտեալ զողորմութիւն ՚ի քէն, փառաւորեցից զՈրդին քո միածին՝ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն. և զՄայրդ ողորմութեան գոհութեամբ բարեբանեցից. յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

## Աղօթք առ սուրբ Խաչն Փրկչական։

Մեծաւ երկիւղիւ, սոսկացեալ անձամբ և ճշմարիտ հաւատով․ այժմ խոնարհեալ, երկրպագանեմ սրբոյ և ամենազօրի Խաչիդ, և անպարտելի Նշանիդ Ք՟ի ա՟յ մերոյ․ և 'ի քէն հայցեմ՝ զօգնութիւն տառապելոյ ծառայիս քոյ՝ որ եմ ա՟մ բարութեանց ունօղ․ ամենաբաւական, և յա՟մի կարող։

Քանզի դու՝ ես երկրպագելի և ամենասուրբ Խաչ․ Աթոռ ես այնմ ամենահարուստ և ամենողորմ Թագաւորին, որ 'ի յերկինս յաթոռս լուսեղէնս բազմեալ՝ թէպէտ միշտ բաշխէր և բաշխէ առատապէս ամենայն արարածոց իւրոց զբարիս՝ և լցուցանէ զամենայն ըստ իւրաքանչիւր պիտոյից․ սակայն՝ յորժամ 'ի քեզ բազմեցաւ յաւուր փեսայութեան, և յաւուր ուրախութեան սրտի իւրոյ, այնքան հաճեցաւ և հաւանեցաւ 'ի քեզ և զու-

արձակեալ, մինչ զի տեսեալ թէ՝ այս է հանգիստ իմ. յաւիտեանս յաւիտենից 'ի սմա բնակեցայց. զի հաճեցայ ընդ սա:

Եւ յաւելու յորախութենէն. ոչ շատացեալ այնոքիւք հատուցականն բարեօքն զորս միշտ հեղոյր յարարածս իւր. այլ բացեալ զդրունս աստուածային գանձարանի մարմնոյ իւրոյ, այսինքն՝ ձեռացն, ոտիցն և կողիցն, բղխեցոյց յիւրաքանչիւրոց անկանցն զառատահոս աղբիւրս ամենատեսակ բարեաց և շնորհաց. և տարածեալ զամենաւոր ձեռս իւր՝ է հեղ և բաշխեց անչափապէս առ ամենեսեան: Մինչ զի և զկենդանարար մարմին և զարիւն իւր ոչ խնայելով՝ ետ ուտել և ըմպել: Ձայնելով առ ամենեսեան թէ՝ եկայք՝ կերայք 'ի հացէ իմմէ և արբէք զգինի իմ, զորս տամ անխնայօրէն՝ որքան բազմեալ եմ, յանթուս յայս ողորմութեն և ուրախութեան:

Արդ՝ ո՛վ տէրդ հանգստեան և սի-
րելի աթոռ ողորմութեանն այ։ Եւ ես
մի եմ՝ ՚ի հաւատացելոց և յերկրպա-
գուաց քոց՝ և ՚ի քեզ բազմեալ թա-
գաւորին. որ եմ աղքատ, քաղցեալ,
ծարաւի և կարօտ յամենայնի։ Վասն որոյ՝
աղաչեմ զքեզ՝ զի ինձ ողորմեսցիս.
յայդքան անպատմելի բարեացդ՝ (որով
լիայն երկնաւորք.) մասն մի՝ և յիս
ողորմելիս կարկառեսցես, որ բաւա-
կանէ ՚ի լցուցումն անձին պիտոյից հո-
գւոյ և մարմնոյ իմոյ։

Դու ես անօթ, տուփ և բժշկարան
այնմ՝ բժշկապետին. որ իւրով ամենա-
հրաշ զօրութեամբն բժշկեաց և ա-
ռողջացոյց զբոլոր բնութիւնս մեր ՚ի
մահաբեր հիւանդութեանց և ՚ի զա-
նազան ցաւոց, զորս ընկալեալ էաք ՚ի
թունից անմարմին օձին. և շնորհեաց
զյաւիտենականն կենդանութիւն։

Այն ամ՝ հոգեկեցոյցք և ամենա-
զօրեղք դեղորայքն ՚ի քեզ են ամփո-

փեալք և 'ի քեզ են գանձեցեալք:
Ահա՛ և ես մի եմ 'ի ծառայից և 'ի բժշկեցելոյն 'ի քէն՝ և 'ի քեզ բաղձեալ բժշկապետէն. վերստին վիրաւորեցեալ եմ 'ի նոյն հնոյ թշնամւոյն. և ախտացեալ եմ 'ի պէսպէս ցաւս և 'ի հիւանդութիս 'ի զանազան թունից նոյ-նոյ չարին. և կարօտիմ քումդ շնորհաց:
Վասն որոյ՝ աղաչեմ զքեզ ով ամենաբարեկան բժիշկ. զի զշիթ մի յայսքան ամենառատական բժշկարար շնորհացդ ցօղեսցես 'ի յիս. որ բաւական է ինձ 'ի բժշկութի հոգւոյ և մարմնոյ իմոյ. և տալ ինձ զյաւիտենականն կենդանութիւն:

Դու ես զաւազան յաղթութեան և զէն անպարտելի՝ ամենազօր փրկչին մերոյ Յի Քի: Որ քեւ պատառեաց զծով մեղաց աշխարհիս. կործանեաց զփարաւոնայեալ թշնամին յանդունդս դժոխոց. ազատեաց զպատկերն իւր 'ի չար ծառայութէ նորին. և եհան 'ի վե-

րենն երուսաղէմ ։ Որ և ջախջախեաց ըզ-գլուխ աներևոյթ վիշապին և անմարմնին գողիադայ, և ազատեաց զժողովուրդն իւր ՚ի խորոխտանաց և ՚ի բռնութենէ նր։

Արդ՝ և ես, որ մի եմ ՚ի ծառայից և ՚ի փրկելոցն ամենազօր փրկչին իմոյ ՚ի ձեռն քոյ, վերստին գերեալ նոյն թշնամին իւրով ամենաչար հնարիւքն. և արար ծառայ՝ իւրական չար գոր-ծոցն։ Եւ միշտ խորոխտալով ՚ի վերայ իմ՝, կամի զիս յաւիտենականապէս ծա-ռայեցուցանել և դժոխային առնել։

Վասնորոյ՝ աղաչեմ զքեզ, ո՜վ ա-մենազօր սուրբ խաչ։ Խորտակեա՛ ըզ-բռնութիւն թշնամւոյն իմոյ. և ազա-տեա՛ զիս ՚ի ծառայութենէ նորին։ Եւ ապահովելով զիս ընդ հովանեաւ քով, հանցես զիս ՚ի յերկինս ընդ ամենայն փրկեցելոյն՝ ՚ի յաւիտենական ազատու-թիւնն և յանպատում ուրախութիւնն։

Ո՛վ ամենապանծալի և յամենեցունց երկրպագելի սուրբ խաչ։ Միանգա-

մայն դու ես կնիք, նշան, և դրոշմ այն աստուծոյ, Թագաւորին Թագաւորաց, արարչին և նախախնամողին ամ արարածոց ։ Վասնզի՝ քև կնքէ և նշանէ աստուած զիւրսն՝ և բաժանէ յօտարաց։ Քև ճանաչէ զիւրսն՝ և ճանաչի ՚ի նոցանէ ։ Քև գրեալ զգիր ազատութեանն ադամայ և նորայնոյն ։ Քև նկարագրեալ զնոր ուխտս և զօրէնս իւր ՚ի սիրտս նորոյս իսրայէլի ։ Քև արձանագրեալ քակել դժոխոյն և ազատել հոգւոյն ։ Քև դատավճռեալ զկործանումն սատանայի և բռնութեան նորա ։ Քև հրամանագրեալ զխաղաղութիւն երկնաւորաց և երկրաւորաց ։ Քև դրոշմեալ ազատէ և պահպանէ զիւրսն ՚ի յանկարծամահ սատակմանէ, և յաւիտենական մահուանէ . հանէ յերկինս և գրէ ՚ի գիրն կենաց ։ Եւ ՚ի հանդերձեալն՝ զքեզ ունելով առաջի իւր նախընթաց՝ գայ ՚ի դատաստան փառօք

հօր՝ 'ի դատել զամենեսեան։ Եւ քե-
կնքէ զամենահաստատ և զանսխալելի
վճիռն զայն թէ՝ արդարքն երթիցեն
'ի կեանսն յաւիտենականս և մեղա-
ւորքն 'ի տանջանսն յաւիտենականս։

Արդ՝ ո՞վ ամենաբարելի սեղան, և
աթոռ ողորմութեան։ Ո՞վ ամենատե-
սակ շնորհաց օթարան, և ա̃մ ցաւուց
բժշկարան։ Ո՞վ ահարկու զէն, և ա-
մենապօր գաւազան։ Ո՞վ ամենապաշ-
տելի նշան, և անլուծանելի կնիք ամե-
նաթագաւորին ա̃յ և փրկչին մերոյ Յի-
սուսի Քրիստոսի ս̃բ Խաչ։

Այս ա̃մ՝ և ես առաւել քան զայ-
սոսիկ՝ բիւրապատիկ պարգևք և բա-
րութիւնք. բժշկութիւնք և կենագոր-
ծութիւնք. ազատութիւնք և փրկա-
գործութիւնք. ա̃ծական տնօրէնութ̃իք
և ներգործութիւնք. քե՝ և 'ի ձեռն
քոյ բաշխեցան և բաշխին. գործե-
ցան՝ և գործին. կատարեցան և կատա-
րին։ Որոց գործիքն՝ միջնորդն և ըշ-

տեւմարանն՝ դու ես մի՛ ամենասիրելի Խաչ Քրիստոսի Տն մերոյ ։

Արդ՝ և ես ամենաթշուառս և ամենաողորմելիս որ մի եմ 'ի քև. փրկեցելոցն և բարերարեցելոցն. քև կնքեցելոց և երկրպագուաց ծառայիցն քոց ։

Քանզի՝ քև վերածնեալ կենդանացայ և նորոգեցայ 'ի հնութենէ մեղաց և 'ի մեռելութե̃ մահաբեր ծառոյն ։

Քև կնքեցայ և նշանեցայ՝ լինիլ քո̃ և ժառանգորդ յաւիտենական կենաց ։

Քև դրոշմեցեալ բաժանեցայ յօտարաց՝ և դրեցայ ոչխար և հաւատացեալ քրիստոսի Ճշմարիտ հովուին ։

Քև կնքեմ և նշանեմ զդէմս իմ և ամրափակեմ միշտ զամ̃ զգայարանս հոգւոյ և մարմնոյ իմոյ. և քև պարծիմ հանապազ, և զքեզ ունիմ ինձ յոյս և օգնական յամ̃ ժամու ։

Եւ այժմ՝ անկանիմ առաջի ամենազօրի սրբոյ նշանիդ. և խոնարհեալ երկիր պագանեմ. և համբու-

րեմ շրթամբք հոգւոյս զհող պատուանդանիդ. և խնդրեմ աղաչանօք. զի զքո սուրբ և զահեղ անուանդ և զսոսկալի կնիքդ անջնջելի և անմեկնելի պահեսցես 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ ծառայիս քոյ. և ընդ հովանեաւ քով պահպանեսցես զիս 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր վտանգից ։

Երկրպագեմ ընդ քեզ և սրբոյ և հրաշագործ գործակցացն քոյ. Ա՟ծակիր և կողամուխ սրբոյ Գեղարդեանն. սոսկալէաց սրբոյ Բեւեռացն. Ա՟ծաշօշափ սրբոյ փշեայ Պսակին՝ և այլոց պատուական արեամբ ներկեալ նշանաց և գործեացդ չարչարանացն Ք՟ի աստուածոյ մերոյ ։

Որք ամենեքեանքդ՝ էք շտեմարանք շնորհաց. աղբիւրք բարեաց. գործիք փրկութ՟ե. նշանք ամենազօրք. և անտկարանալի սուրբ ը՟դէմ թշնամւոյն ։

Որոց ամենեցունցդ խոնարհեալ երկիր պագանեմ՝ մեծաւ երկիւղիւ և

պատկառանօք . և աղաչեմ զձեզ . ո՛վ շնորհատուք և փրկագործք ս̄բ Նշանք :

Վերո՛ւք ծառայիս ձերոյ միշտ օգնականք՝ պահապանք՝ հովանիք և վերակացուք . ՚ի տուե և ՚ի գիշերի . ՚ի ննջել և ՚ի յառնել . ՚ի նստիլ և ՚ի գնալ . ՚ի գործել և ՚ի հանգչիլ . և յամենայն ժամու :

Որպէս զի՝ ընդ ձերով հովանեաւորութեամբն ամրափակեալ՝ և պարպեալ՝ կեցից պահպանեալ և փրկեցեալ յամենից մեղաց . ՚ի փորձութեանց դիւաց . ՚ի մարդոց անիրաւաց . ՚ի չարախօս և ՚ի զրախօս լեզուաց . ՚ի մարդադէմ գազանաց . ՚ի թունաւոր և վնասատու կենդանեաց . ՚ի յերևելի և յաներևոյթ թշնամեաց . ՚ի հոգևոր և ՚ի մարմնաւոր վտանգից . և յամենից պէսպէս յորոգայթից և ՚ի չարահնար պատահմանց :

Եւ ՚ի յիշելն իմ զսոսկալի անուանս ձեր , և ՚ի կնքել զդէմս իմ , հալա-

ծեսցին և չքասցին. կորիցեն և ան-յայտք եղիցին ա͞մ հնարք՝ երևոյթք. ազդմունք. ծուղակք և որոգայթք չարին

Եւ որչափ՝ և յորժամ՝ յարիցեն 'ի վերայ իմ 'ի պատրել և 'ի նենգել զիս ըստ հոգւոյս և ըստ մարմնոյս, տեսանիցեն պարապեալ և կնքեալ ամենասուրբ անուամբ ձերով՝ դարձցին յետս ամօթալիցք և գլխակորք:

Եւ որքան եմ 'ի կեանս յայս, կեցից պահպանեալ և ապրեցեալ յա͞մ որոգայթից թշնամեայ՝ և յամենից մեղսառիթ ընթացից՝ սուրբ և հրաշալի անուամբ ձերով:

Եւ յետ աստեացս ձեօք կնքեցեալ՝ ներկայացայց առաջի ք͞ի ա͞յն իմոյ, և դասեցայց ընդ աջակողմեանս, և լուայց զօրհնաբանելի ձայնն զայն թէ՝ եկա՛յք օրհնեալք հօր իմոյ. և ժառանգեցէ՛ք զյաւիտենական կեանսն:

Յայնժամ և ես փառաւորեցից զք͞ս ա͞ծն իմ ընդ հօր և ընդ սրբոյ հո-

գտոյն. և զձեզ զսբ և զփրկագործ
նշանսդ՝ գոհութեամբ բարեբանեսցուք
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## Աղօթք՝ զոր պարտ է առնել ՚ի մտանել քո ՚ի տունն եկեղեցւոյն:

Ո՛վ տէր՝ այժմ մտանեմ ես ՚ի տաճար սբ քո. օգնեա՛ ինձ՝ աղաչեմ զքեզ՝ և ընկա՛լ զաղաչանս իմ: Տո՛ւր ինձ և ամենեցուն՝ որք ժողովեալ են այսօր յայսմիկ սուրբ եկեղեցւոջ՝ պաշտել զքեզ հոգւով և ճշմարտութ:

Հոգի քո սբ օգնական լիցի մեզ ՚ի. տկարութե մերում. և ուղղեսցէ զմիտս մեր ՚ի խորհուրդս երկիւղածութե, ջերմեռանդութե և բարեպաշտութե: Ո՛վ տէր՝ տո՛ւր մեզ քաղել զարդիւնս յաղօթից և յաղաչանաց մերոց, ՚ի պատիւ սբ անուան քո, և յօգուտ հոգւոց մերոց, տն մերոյ՝ Յի Քի՝ ամէն.

# ԱՂՕԹՔ
# Ի ԺԱՄ ՍՈՒՐԲ ՊԱՏԱ-
# ՐԱԳԻՆ։

---

Յայսպարէն ներանայեն՝ մտօք զաղօթս։

Խոստովանիմ և հաւատամ ամենակատար, ինքնակատար և նախակատար, զհամագոյ և զպաշտելի, երկրպագելի և գերագոյ զամենասուրբ զերրորդութիւն զՀայր և զՈրդի և զՍ̃բ Հոգին։ Հայր անծին և անսկիզբն՝ ծնօղ Որդւոյ և յառաջ առաքօղ Հոգւոյն ս̃բյ։ Իսկ որդին ծնեալ ՚ի Հօ-

րէ նախ քան զյաւիտեանս անմարմնաբար և անժամանակապէս ։ Եւ Հոգւոյն Սբ բղխեալ ՚ի Հօրէ անհասաբար և անսպառապէս, համագոյակից հօր և փառակից որդւոյ. միութեն բաժանեալ յերիս յանձինս, և երրորդութեն միացեալ ՚ի մի բնութի և ՚ի մի Աստուածութիւն ։ Եւ արդ՝ աղաչեմք զքեզ հա՛յր երկնաւոր. միջնորդութեամբ միածնի որդւոյ քո, և գթութեամբ հոգւոյդ սրբոյ ։ Տո՛ւր մեզ տէ՛ր հոգի զգաստութե, հոգի խորհրդոյ, հոգի հեզութեան, հոգի զօրութե, հոգի իմաստութեան, հոգի գիտութեան, հոգի երկիւղի և Աստուածպաշտութե. և լի՛ց ամ բարեգործութե. որպէս զի զկամս քո արարեալ յայսմ աշխարհի, եղիցուք արժանի ողորմութե քում ՚ի հանդերձելումն շնորհօքն Քի. Ը որոյ քեզ և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք պատիւ և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից ամէն ։

Յորժամ ոչասէին ըճաշու շարականն՝ Տապաղաշօքն

Իւղ Թափեալ անուն՝ միածին Որդի ԱՅ՝ ԱԾ ճշմարիտ, որ յանճառական փառաց խոնարհեցար ՚ի հայրական ծոցոյ, և առեր զմարմին ՚ի սուրբ և յանշարախ կուսէն Մարիամայ, եղեր մարդ ճշմարտապէս՝ անփոփոխելիդ ՚ի յէութե, անցանելով ը ամ կերպ մարդկային՝ բաց ՚ի մեղաց։ ՚ի յերկրի երևեցար և ընդ մարդկան շրջեցար, և կատարեցեր զամ ըստ օրինացն, լրումն լինելով մարգարէից և օրինաց. զանիմանալի և զանհասանելի անուշահոտութի ածութեանդ բուրեցեր յաշխարհի՝ հաղորդելով զամենեսեան երկնաւոր և առատաբաշխ պարգևիդ, ՚ի յոր կցորդիլն զմայլեալ անմահացան տիեզերք։ Եւ արդ՝ դու նոյն ինքն բարերար և բազումողորմ, բաց զքիմս մտաց իմոց հոտոտել ՚ի հոտոյ անուշից մարմնոյ ածութեան քո, և ընկալ զաղօթս մեր իբրև

զխունկ անոյշ և որպէս զպատարագն Աբելի՝ Նոյի և Աբրահամու, և իբրև զբանաւոր պատարագս մեր քոյ և սիրողաց անուան քո՝ որք 'ի սկզբանէ հաճոյ եղեն քեզ, որոց մասին և մեզ լիցի ժառանգութի՜ շնորհօք միածնիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Ձայգ ընդ Մուրէ ածին՝ ... շարօրն ։

Մե՜ր Ա՜ծ անմահ և հզօր՝ որ սրբաբանեալ պաշտիս 'ի հրեղէն և յանմարմին զուարթնոյն, անլռելի և անդադար օրհնաբանութե՜. զոր և սերովբէքն սոսկալի և ահեղագոչ ձայնիւ երգեն զերգս երեք օրհնեան՝ բարեբանելով զանմահ տէրութիւնդ, և քերովբէքն գովասանական ձայնիւ փառաւորեն զանբաւագոյն Ա՜ծութիւնդ, և ա՜մ զօրութիւնքն վերնական գոհաբանեն երկրպագութեամբ փառաւորե-

լով զամենազօր Թագաւորութիւնդ ։ Ընդ որս և մեք բանաւոր հօտ քո , և ստեղծուածք անարատ ձեռաց քոյ՝ ժողովեալ ՚ի գաւիթ սուրբ եկեղեցւոյ քո կալով առաջի ածընկալ սբ սեղանոյս՝ տկար անձամբ և մեղաւոր շրթամբք երգեմք զերգս երեքսրբեան սրբասացութեամբ , և աղաչեմք զառատաբաշխ գթութիւնդ ընկալ զպտուղ շրթանց և զբանաւոր պատարագս սըրտից մերոց ՚ի հաճոյս քեզ ըստ մերնոյն արժանաւորութեան , և թո՛ղ մեզ զամ յանցանս մեր , զկամաւ և զակամայ , զգիտութն և զանգիտութեան , զմտաց և զխորհրդոց , զբանից և ըզգործոց , զհոգւոց և զմարմնոց , և զամենայն մասանց անդամոց , որպէս զի լիցի մեզ կարողութի արժանապէս օրհնել զքեզ և գովել զանուն քո սբ ։ Տո՛ւր մեզ Տէ՛ր մաքրութիւն մտաց , զղջումն սրտից , Ճշմարտութիւն շըրթանց , զարտասուս աչաց · ամբծութն

հոգւոյ, և օրհնութիւն մարմնոյ ։ Լցո՛ զմեզ ամ առաքինութեամբ, պայծառ հաւատով, աներկբայ յուսով և մաքուր սիրով ։ Եւ զարդարեա՛ զմեզ խոհեմութեամբ՝ ողջախոհութեամբ, արիութեամբ՝ և արդարութբ ։ Զօրացո՛ զմեզ յաղթօղ լինել ընդդէմ հնարից բանսարկուին, և զամ նետս մուխս չարին շիջուցանել․ արդարութբ և ածպաշտութբ կալ մնալ յմի ըս հաճոյից և ըս կամաց քոց, և յետ աստի կենացս զանճառ բարիսն վայելել տերամբ մերով․ որում փառք և զօրութին յաւիտեանս․ ամէն ։

Ա[illegible] ի վայր [illegible] է Գրոց և [illegible]․ և [illegible] [illegible] [illegible] ընդ երգոցին ։

Աղօթք Սրբասացութեան ։

Տր մեր Յս Քս, որդի Այ և բան հօր, որ ըստ անճառ բարերար-

ութեան քո, ո՛չ կամեցար անտես առ-
նել զարարածս ձեռաց քոց, այլ մար-
դասիրապէս գթացար յազգս մարդկան
խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ էնդ.
ԸՇ, առեր զմարմին 'ի սուրբ կուսէն
Մարիամայ, կամաւ Հօր և հաճութե
սուրբ Հոգւոյն, զա՟մ զմարդկայինս
յանձն առեր կրել բաց 'ի մեղաց. և
զա՟ծային մարմինդ քո ետուր փրկանս
փոխանակ բազմաց, ըստ կանխասացութե
ան շուշտ հրամանի քո խաչի և մահու
համբերելով: Հովիւդ քաջ զանձն քո
եդեր 'ի վերայ բանաւոր հօտի քո,
ժողովել զցրուեալսն 'ի փարախ կա-
թուղիկէ սուրբ եկեղեցի քո, լինիլ
մի հօտ և մի հովիւ: Արդ որոյ մեք
ժողովուրդք և խաշն արօտի քո՝ երկ-
րամած դիմօք խոնարհեալ և 'ի ծունկս
անկեալ աղաչեմք զանբաւ մարդասի-
րութիւն քո, մի՛ թողուր զմեզ 'ի ձե-
ռաց քոց, և մի՛ անտես առներ զան-
բիծ արեամբ քո փրկեալ հօտս. մի՛

տար զմեզ ՚ի փորձ թշնամւոյն և հակառակորդին մերոյ. սրբեա՛ զմեզ ՚ի մեղաց և մաքրեա՛ զմեզ յա՟մ անօրէնութեանց մերոց. լուա՛ զսիրտս մեր ՚ի խղճէ չարեաց և փրկեա՛ զմեզ անիրաւութեանց. լոյս տո՛ւր ո՟ր աչաց մերոց, զի մի՛ երբէք ննջեսցուք ՚ի մահ, և մի՛ լիցի տեղի պարծանաց թշնամւոյն, այլ խորտակեալ ջաղխեսցի գլուխ նորին՝ զօրութեամբ ամենայաղթ խաչի քո, և տկարասցին զօրութիւնք մեքենայից նորա։ Եւ տո՛ւր մեզ անարգել և անբռնադատ վճարել զկեանս մեր ա՟մ արդարութեամբ հետեւելով լուսոյ շաւղաց և երկնաչու ճանապարհին, ՚ի վայրն դալարուոջ բնակեցո՛ զմեզ և առ ջուրս հանգստեան սնո՛. զի տեսցէ թշնամին և ամաչեսցէ զի քոյ եմք ստեղծեալք և քոյ եմք փրկեալք, դու ես օգնական և փրկիչ մեր, զի բաց ՚ի քէն զայլ ո՛ք ոչ գիտեմք և զանուն քո տէ՛ր կարդամք զօրհանապազ. մի՛ թո-

ղուր զմարդասիրութիւն քո 'ի ձեռաց քոց, այլ ամենազօր աջ քո՛ լիցի հովանի և պահապան 'ի վերայ պաշտօնէից քոց, բարեխօսութեամբ ս͞ր ա͞ծածնին և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց, և քեզ փառք յաւիտեանս. ամէն:

Ընդ ողջունին՝ Տէրտ ողորմեա ասայ :

Միջնորդ Ա͞Ծ և մարդկան՝ Տէր մեր Յ͞Ս Ք͞Ս, որ ամենաբարի և խաղաղարար միջնորդութեամբ քո հաշտեցուցեր զհայր ընդ արարածս, և արարեր խաղաղութ͞ի երկնաւորաց և երկրաւորաց, հեռաւորաց և մերձաւորաց. և զնոյն խաղաղութ͞ի շնորհեցեր եկեղեցւոյ քո ասելով, զխաղաղութ͞ի թողում ձեզ, զխաղաղութ͞ի զիմ տամ ձեզ: Եւ այժմ տէր աղաչեմք զքեզ՝ զերկնաւոր և զհաշտարար խաղաղութ͞ի քո պարգևեա մեզ, զի խաղաղութ͞բ և

համբերութ̅բ վարեսցուք զկեանս մեր, առանց մեղաց և առանց գայթակղու-
թեան. և սուրբ սրտիւ սիրել զմի-
մեանս որպէս դու զմեզ սիրեցեր, և
դնել զանձն ՚ի վերայ ընկերին որպէս
դու եդեր, և լինել առ միմեանս գը-
թածք՝ քաղցունք և բարերարք, որպէս
դու արարեր, հնազանդութ̅բ և խո-
նարհութ̅բ ծառայել միմեանց, որպէս
դու խոնարհեցար ՚ի ծունկս քոյոց ա-
շակերտացն. որով մարթասցուք լինիլ
պատշաճապէս անդամք և մարմին գըլ-
խոյդ մերոյ։ Եւ դու Տէ՛ր ասացեր,
թէ ուր երկու և երեք ժողովեալ են
յանուն իմ՝՝ անդ եմ ես ՚ի մէջ նոցա։
Վասնորոյ և մեք ժողովեալ յանուն
քո ՚ի գաւիթ սուրբ կաթուղիկէ ա-
ռաքելական եկեղեցւոյ, և ա̅ծային
և սուրբ ողջունիւս եղեալ մի անձն
և մի սիրտ, ըստ սրբոյ առաքելոյն։
Լո՛ւր աղաչանաց մերոց մարդասէր տէ՛ր
և բնակեա՛ ՚ի սիրտ և յոգի ժողովե-

լոյս յանուն քո ։ Սրբեալ մաքրեա՛ և յարդարեա՛ զմեզ լինել տաճար և բընակարան ամենազօր շնորհաց քոց․ հեղայց ՚ի մեզ զ͞ամ խորամանկութի և զնենգութիւն թշնամւոյն զի սուրբ սրտիւ և մաքուր մտօք, երկիւղիւ և արդարութ͞բ զօրհանապազ փառաւորեսցուք զամենազօր անուն քո, այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։

Յորժամ ղ͞ճէ ճ͞էն երգէն՝ դիա ղաղօրհա աաա ։

Սուրբ Ս͞բ Ս͞բ տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք քո, սերոբէքն աղաղակեն հրաշալի և հոգեղէն բարբառով առաջի փառաց աթոռոյ մեծութեան քո․ քանզի զարհուրեալ ՚ի հիասքանչ և ՚ի հրաշալի փառաց քոց ոչ ունելով կարողութի արժանապէս փառաւորել զանհասանելի մեծութիւն քո ։ Վասն որոյ անլըռելի և անդադար օրհնաբանութեամբ

փառաւորէն զմիասնական ա̃ծութ̃իդ, զպաշտելի և զհամագոյ երրորդութ̃իդ ։ Արդ՝ եթէ հրեղէնքն և իմանալիքն չեն բաւական քոյոյ անբաւութե̃, մեք հողանիւթեայքս և յերկիր կործանեալք զի՞արդ կարասցուք բովանդակել բանիւ զանբաւելի գթութիւնդ առ արարածս, և մանաւանդ առ ազգս մարդկան ։ Որ նախ սկզբանն արարչագործ ձեռամբդ ստեղծեր զնախնին մեր զադամ, պատուելով զնա քան զայլ արարածս՝ որ բանիւ միայն արարան. և յետ պատուիրանազանցութե̃ պտղոյն ճաշակման, ո՛չ արարեր անտես զանկեալ բնութիւնս, այլ ետուր զօրէնս, և առաքեցեր զմարգարէս յայտնելով զօգուտն. Իսկ պատրեալքն ՚ի պատրողէն ո՛չ ծանեան զխորհուրդ բարերար կամաց քոց ։ Ապա հայրդ երկնաւոր կամելով յայտ առնել զանճառական սէրդ, կամակցութ̃բ հոգւոյդ սրբոյ, առաքեցեր զմիածինն և զծոցածինն բանդ

որ եկեալ մարմնացաւ 'ի սուրբ կուսէն և նովին մարմնովն համբերեաց չարչարանաց, խաչի և մահու, և եղև քաւութիւն մեղաց մերոց։ Վասնորոյ մեք ընդ սերովբէիցն երգեմք նմա ասելով, սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք քո, օրհնութիւն 'ի բարձունս. օրհնեալ է գալուստ քո յաշխարհս 'ի փրկութիւն մեզ քրիստոս աստուած մեր. օրհնեալ է կենսաբեր մարդեղութիւն քո. օրհնեալ է փրկաւէտ չարչարանք քո, որով զերծաք 'ի չարչարանաց և յանչարչարութենէն վիճակեցաք։ Օրհնեալ է կենդանարար մահն քո, որով փրկեցաք 'ի դառն մահուանէ, և յանմահութիւնն երկնից վերափոխեցաք. որ յաւէժական գոհաբանութեամբ մատուցուք փառք և երկրպագութիւն բարերարիդ՝ փրկչիդ և նորոգողիդ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Յորժամ Առէք կերէքն ասասցէն՝ Դպիրք:

Օրհնեալ է պարգեւատուն կենաց. և պարգեւն անմահութե̄ն քո ա̄ծ մեր:

Եւ յորժամ Արբէք 'ի սմանէ ասէն՝ Դպիրք:

Օրհնեալ է շնորհն ձրի, և պարգեւն անծախելի, կենդանի և կենդանարար մարմինն և արիւնն քո ա̄յ մերոյ:

Յորժամ Հայր երկնաւորն ասասցէն՝ զայս աղօթս Դպիրք:

Հայր երկնաւոր բարերար և բազումողորմ ա̄ծ, տուօղ բարեաց և պարգեւիչ կենդանութեան, ամենաբարի բնութ̄դ՝ յաղթեալ եղեր 'ի մարդասիրութ̄է, մինչ զի զհամագոյակից և զարարչակից՝ աթոռակից և համասարակից բանդ՝ առաքեցեր յաշխարհ առ 'ի մարմնանալ 'ի սուրբ կուսէն, և նովին անմեղ և անպարտական մար-

ծնունդն եղև գին և փրկանք ամ՟ աշխար-
հի. զի ետուր զնա 'ի զենումն, 'ի մահ,
և 'ի փրկութիւն, վասն ամ՟ հաւատա-
ցելոց անուան քո մեծի ։ Եւ այժմ ա-
ղաչեմք զքեզ, միջնորդութեամբ մար-
մնոյ և արեան միածնի քո ։ Հայեա՛ց 'ի
հեղումն սուրբ արեան նորա, և յանչն-
չութիւն նորա 'ի խաչին, 'ի բացումն
փրկական աղբերաց նորա, և արեամբ
թաթաւումն սուրբ մարմնոյ նորա, և
անցո՛ 'ի մէնջ զցասումն պատուհասի
յանցանաց մերոց բարերարութ՟ քով,
զի նորա եմք փրկեալ, խնայեա՛ 'ի գինս
սուրբ արեան միածնի քո, և ողորմեա՛
բանաւոր հօտի քոյ յուսացելոցս յա-
նուն քո ։

Յորժամ յառն օրհնել էս զերն աղէն, մատա
ղաղօրհն ։

Արժանապէս օրհնեմք զքեզ, և
արդարապէս գովեմք և գոհանամք ըզ-

քեն տէր ած մեր, որ ըստ բազում ողորմութեան քում՝ անտես արարեր անարժան գործս մեր, և այժմ շնորհեա արժանաւորս կայուցեր, վասն միջնորդութն մարմնոյ և արեան միածնի քո, հաղորդս լինել փառաց ածութեանդ քո, միաւորելով ընդ գերապատիւ ճոխութդ քո։ Վասն որոյ՝ յամի օրհնեմք, և ըստ ամի գոհանամք զքեն զորհանապազ, տէր ած մեր ողորմեա՛ մեզ։

Յորժամ որդէ ժղն ասէն, Հայր աղօթս ։

Հա՛ց կենաց և բաժակ անմահութե միածին որդի ած՝ տէր մեր և փրկիչ յս քս՝ ած ճշմարիտ, մանանայդ երկնային իջեալ ՚ի վերուստ, եղեր կերակուր ամ հաւատացելոց քոց. Հեղմամբ արեան քո՝ ողորմեա բանաւոր հօտի քո, շնորհելով զթողութի յանցանաց հաւատացելոց ՚ի մահու՝ լեր փըր-

կութի̃ հաստատելոյ, և արժանաւորես ճաշակողաց զմարմին և զարիւն քո տ̃ր ։ Յիշեա՛ զփրկաւէտ չարչարանս քո և զկենդանատու մահն, զարեամբ ճապաղումն ՝ի խաչին և զանտանելի կիրսն, զոր ընկալար ՝ի մարմնոջ վասն մեր ։ Նուաճեա՛ ՝ի խոցուածս՝ արարչագործ ձեռաց և ոտից քոց, և ՝ի բացումն կենարար կողին որով նորոգեցան տիեզերք, և արբեցան արարածք ։ Նովին վտակօքն լուա՛ և մաքրեա՛ զմեզ յա̃մ մեղաց մերոց, և թո՛ղ մեզ զա̃մ յանցանս մեր ։ Խնայեա՛ արեամբ քո փրկեալ հօտի, և այց արա՛ մեզ ՝ի միւսանգամ գալստեան արքայութե̃ քում, զի մահուամբ և չարչարանօք փրկեցեր զմեզ ք̃ս ա̃ծ մեր՝ բարերար և նորոգօղ, և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Յորժամ հոգի ա̃յ առէն , ասա զաղօթս զայս ։

Հոգի ա̃յ ա̃ծ ճշմարիտ, որ նախ

յսկզբանն շրջէիր 'ի վերայ ջուրց, և ստեղծանէիր զարարածս յոչնչէ, և պէսպէս հրաշսն գործէիր յաւուրս մարգարէիցն, և 'ի ժամանակի տնօրէնութեան էակցին քո իջեր 'ի յորդանան և 'ի վերնատունն, լցեր զառաքեալսն բազմապատիկ շնորհօք ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ միջնորդութե̃ ս̃բ մարմնոյ և արեան փառակցին քո՝ որ բազմեալ կայ 'ի վերայ սրբոյ սեղանոյս, էջ 'ի սիրտ և յոգիս մեր, և մաքրեա՛ զմեզ իբրև զառաքեալսն 'ի ս̃բ վերնատանն, և բորբոքեա՛ 'ի մեզ զկայծ սիրոյ ա̃ծութեանդ, զի արժանապէս լիցուք տաճար և բնակարան քեզ և էակից փառակցացդ. և ամենազօր շնորհիւ քո՝ լիցուք փրկեալք յաւուր նորոգման մերոյ, և քեզ նորոգողիդ ա̃յ վայելէ փառք յաւիտեանս. ամէն ։

'Ի ժամ ասատէլոյին՝ Տապո ղաղօնս ։

Յիշեա՛ տէր և ողորմեա՛, և օրհ-

նեա զուխտ և զժառանգութիւն եկե-
ղեցւոյ քում սրբոյ, և շնորհեա մեզ
զերկնային քո զխաղաղութիւն, զի մի
լիցի ՚ի մեզ տեղի և մուտ չարին. հե-
ռացո ՚ի մէնջ զամ խարդախութիւն
թշնամւոյն, և զբռնութիւն նորա խոր-
տակեա, բարեխօսութեամբ և յիշա-
տակաւ սրբուհւոյ ածածնին, և յով-
հաննու կարապետին, և սրբոյն ստե-
փաննոսի նախավկային, և սրբոյն գրի-
գորի մեր լուսաւորչին, և սրբոց ա-
ռաքելոց և մարգարէից, և սրբոց հայ-
րապետաց և մարտիրոսաց, ճգնաւորաց
և կուսանաց, և ամ սրբոց քոց՝ երկ-
նաւորաց և երկրաւորաց, որոց յիշա-
տակն են օրհնութեամբ եղիցի ՚ի մէջ
սուրբ եկեղեցւոյս՝ և առաջի սբ պա-
տարագիս. ամէն:

Զայդ ընթ. գոհութեան՝ սաս ղաղօրս ղայս:

Յիշեա տէր և ողորմեա, և գթեա
՚ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց,

որք ուղիղ դաւանութեամբ պաշտեցին զքեզ, և նովին հաւատով և յուսով ննջեցին 'ի քեզ. յիշեա՛ զնոսա յաւուր մեծի գալստեան արքայութե̄ քո, արա՛ արժանի ողորմութեան, քաւութեան և թողութե̄ մեղաց, դասաւորեալ պայ- ծառացն ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն, զի յաւէժական խնդութե̄ և մշտնջենական կնծութեամբ փառաւոր- եսցեն զքեզ ք̄ս, ընդ Հօր, և ա̄ ս̄բյ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ըստ հայր Մերին՝ նոյն Հայր Մեր որ յերկինսն ......
ըշ փէրունդայն է:

Արեւոյն ողջէշերանի. 'ի արեւուն արեւոյն ....:

Զերևեալդ ինձ 'ի փրկութիւն՝ խոստովանիմ Ճշմարտապէս մարմին և արիւն քո ա̄յ յուսոյ իմոյ, և աղա- ղակեմ առ քեզ մեղայ յերկինս և ա-

ռաջի քո, սրբեա զիս յամենայն պղ-
ծութե̄ հոգւոյ և մարմնոյ, շնորհեա
ինձ ժամանակ և յանկութիւն ապաշ-
խարութեան. մերկեա զիս յերևելի և
յաներևոյթ թշնամւոյ. տպաւորեա զօ-
գուտն հոգւոյ և մարմնոյ իմոյ։ Պար-
գևեա ինձ բարեգործութեամբ և բա-
րեպաշտութեամբ՝ զքեզ արժանապէս
Ճաշակել, և փառաւորել զհայր, և
զորդի, և զսբ̅ հոգին, այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ յորժամ առնուցեն ՚ի ձ̅ե̅ ՚ի ձ̅ե̅ն, ասա։

Խոստովանիմ և հաւատամ, զի
դու ես Ճշմարիտ մարմին և արիւն յի̅
քի̅՝ որդւոյն այ̅, որ բառնայ զմեղս աշ-
խարհի, ոչ մերոյս միայն, այլև՝ ամ̅
աշխարհի. հաւատովս հաւատամ, խոս
տովանիմ և հաւատամ։

Երէք անգամ զայս ասա։ Եւ այլ աղէաղէս
խնդրուածք, զառն հինգերորդեան և ննջեցելոց։

Յորժամ չէ պատարագիչ քահանայն մատուցանէ զաղօթս

Միածին որդի ա՛յ և բան Հօր՝ ա-
րարիչ երկնաւորաց և երկրաւորաց, և
լցուցիչ Համայն արարածոց. որ ընուս
զա՛մ յամի, անպարագրելի գոլով բը-
նութեամբ՝ բովանդակեցար ՚ի մարմնի,
զի տեսանելի և շօշափելի լեալ մարդ-
կային ազգի, վասն որոյ՝ ճաշակելի և
կերակուր եղեր ա՛մ Հաւատացելոց, զի
տացես կեանս յաւիտենականս այնո-
ցիկ՝ որք Հաւատով և սրբութբ մեր-
ձենան ՚ի քեզ, ըստ անսուտ խոստ-
ման քո մարդասէր։ Եւ այժմ մեք փր-
կեալքս պատուական արեամբ քո՝ Հաւա-
տով տեսանեմք զփրկիչդ մեր բոլորա-
պէս պարունակեալ ՚ի ներքոյ կրկին
տեսակաց՝ Հացին և գինւոյն, Հոգւով՝
մարմնով և ա՛ծութբ. յաղագս որոյ՝
երկրպագութի մատուցանեմք փրկողիդ
մերոյ, և աղաչեմք վասն գթութի
քո։ Լոյծ զկապ մեղաց մերոց, և ջըն-

ջեմ զձեռագիր մերոյ անօրէնութե՟ն ,
բեւեռեմ զմեզ յերկիւղ և 'ի սէր քո
սուրբ , զի միշտ գնասցուք արժանի
կոչմանն՝ յոր կոչեցեր զմեզ ։ Տուր մեզ
տէր՝ բանաւոր հօտի քո , յամ՟ սրտէ
հետևել միայն զկնի ճշմարիտ հովու-
ին և կատարել զկամս քո , և լսել
զերանաւէտ բարբառ քո , և աճել օր-
ըստօրէ , պահել զպատուիրանս քո զօր-
հանապազ ։ Պարգևեա մեզ զսիրտ ն՟ր
և զհոգի խոնարհ , զի մի՛ արհամար-
հեալ լիցուք առաջի քո ․ մաքրեա ըզ-
միտս և զխորհուրդս մեր , որպէս սըր-
բոց քոց առաքելոյն , զի ը՟դ նոսին ար-
ժանի լիցուք՝ զսուրբ և զսրբարար ,
կենդանի և կենդանարար , զմարմին և
զարիւն քո՝ քն՟ ա՟ծ մեր ։ Ճաշակել և
հաղորդիլ , յուսով կենացն յաւիտե-
նից , ը՟դ ա՟մ սուրբս քո , այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

Յորժամ երկիրպագեն և համբուրեն ասեն, սա ։

Ած մեր, և տէր մեր, երևեցաւ մեզ, օրհնեալ՝ եկեալ անուամբ տն ։

Զկնի սա ։

Գոհանամք զքէն հայր ամենակալդ որդւդ միածնին, և հոգւդ ճշմարիտ, որ ընտրեցեր հաւատացեալքս անուանդ քում սրբոյ, 'ի մասն վիճակի սրբոյն 'ի լոյս, և ստացար քեզ ժողովուրդ սեփհական, և արարեր հաղորդ փառաց ածութեդ, և ժառանգորդ անճառ բարութեանց քոց. ոչ ըստ մերում արժանաւորութե, այլ ըստ անբաւ գթութեան քո, որ միշտ շնորհես առատաձեռն և ոչ նախատես, փոքր պահանջես, և մեծամեծս պարգևես ։ Այո՛ օրհնելով օրհնեմք, և գոհանալով գոհանամք զքէն տէր ած մեր, որ յայսմ՝ մասին զմեզ արժանաւորս կա-

կուսին ։ Աղաչեմք զքեզ մի՛ թողուր զմեզ 'ի ձեռաց քոց՝ յայսմ հետէ մինչև՛ յաւիտեան ։ և եկեսցէ ողորմութիւն քո 'ի վերայ մեր՝ զամենայն աւուրս կենաց մերոց ։ և եղիցի անուն քո օրհնեալ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ։

ամէն ։

'Ի վերջն ամենայն աղօթս հայր՝ և գնա խոստովանութեամբ ։

Սկիզբն և կատարումն ամենայնի Աստուած, որ ամենայն բարի 'ի քէն սկսանի և քեւ կատարի, և 'ի քեզ բովանդակի ամենայն, 'ի վախճանի աղօթից՝ ողորմեա մեզ, և լեր ընդ մեզ զամենայն աւուրս կենաց մերոց, և եղիցի ամենազօր աջ քո՝ պահապան մեզ յամենայն ժամ 'ի տուէ և 'ի գիշերի, 'ի նստել 'ի տան, 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել ։ և զամենայն գործս մեր՝ 'ի բարին կատարեա

ամէն ։

### Աղօթք՝ զոր պարտ է ասել յեկեղեցւոջ յետ ընթերցման աղօթից ։

Օրհնեա՛լ լիցի անուն քո՝ ո՛վ Տ՟ր՝ որ ետուր մեզ ժողովիլ ՚ի միասին ՚ի սուրբ տան քում առ ՚ի պաշտել զքեզ աղօթիւք և երկիւղածութեամբ ։

Տո՛ւր ինձ և ամ՟ քրիստոնէից կատարել զսուրբ պատուիրանս քո. և մի՛ տար մեզ լսել զպատգամս քո ընդունայն ։ Ներեա՛ զսխալանս և զթերութիւնս մեր. և ընկա՛լ զանձինս և զաղաչանս մեր բարեխօսութեամբ որդւոյ քո՝ Յ՟ի Ք՟ի, ամէն ։

# ԱՂՕԹՔ

## Ի ԺԱՄ ՃԱՇՈՒՆ.

Ի սկսանիլն հաց ուտելու։

Զմին՝ Հայր մեր որ յերկինս. ևն

---

Եւ յետ ճաշելոյն զկնի Հայր մեր ասելոյն, ասասցէ և զայս Աղօթս։

Տէր Յ՟ս լցաք ՚ի բարութենէ քոյ. գոհանամք զքէն Տէր որ կերակրեցեր զմեզ ուրախութեամբ. և լցուցեր ըզ-

սիրտս մեր ամենառատ բարութ̅բ քով․
աղաչեմք և խնդրեմք 'ի քէն Տ̅ր շ-
նորհեա երկրի մերում առատութիւն
ջրոյ՝ պտղաբերութիւն բուսոյ և տն-
կոյ՝ և լիութիւն ա̅մ՝ իրայ․ որովք
դարմանե̅լ զկեանս մեր հանյուք զօր-
հնութիւն և փառս պարգևողիդ բա-
րութեց․ այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից , ամէն ։

# ԱՂՕԹՔ
## ՚Ի ԺԱՄ ԵՐԵԿՈՅԻ։

---

Կարգադրութիւն հաւատարմաց աղօթից հանգրուանեան ժամուն։ Որ չկարէ ՚ի տէմս Հօր այ զնա պաղատանաւորական աղաղ Փրկչին պահեսցէ զմեզ ՚ի խաւարային գիշերիս։

ԱՌԱՔԵԱ՛ ՏԷ՛Ր զլոյս քո և զճշմարտութիւն քո. զի առաջնորդեսցեն ինձ և հանիցեն զիս ՚ի լեառն սուրբ և ՚ի յարկս քո։ Մտից առաջի սեղանոյ այ առ ած.

որ ուրախ առնէ զմանկութիւն իմ ։
Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ
Տէր Տէր իմ ։ Ընդէ՞ր տրտում ես
անձն իմ . կամ ընդէ՞ր խռովես զիս .
յուսա՛ առ Տէր . խոստովանեա՛ նմա .
փրկիչ երեսաց իմոց Տէր է ։

Փառք Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք
ընկալ կեցո և ողորմեա՛ ։

Օրհնութիւն և փառք Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

## Սաղմոս , 118 ։

Եկեսցէ ՚ի վերայ իմ ողորմութիւն քո Տէր . և փրկութիւն քո ըստ բանի քում ։ Տաց պատասխանի որք նախատեն զիս բանիւք՝ զի ես ՚ի բանս քո յուսացայ ։ Մի՛ ՚ի բացեայ առներ ՚ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ

զի յիրաւունս քո յուսացայ ։
Պահեցից զօրէնս քո յամ ժամ․ յաւի-
տեան և յաւիտեանս յաւիտենից ։
Գնայի ես յանդորրու՝ զի զպատուի-
րանս քո խնդրեցի ։
Խօսէի զվկայութիւս քո առաջի թա-
գաւորաց և ոչ ամաչէի ։
Խորհէի ՚ի պատուիրանս քո՝ զոր սի-
րեցի ։
Համբարձի զձեռս իմ ՚ի պատուիրանս
քո զոր սիրեցի․ և խորհէի յարդա-
րութեան քում ։
Յիշեա՛ զբան ծառայի քո՝ յոր և յու-
սացուցեր զիս ։
Սա՛ մխիթարեսցէ զիս ՚ի խոնարհութեան
իմում․ զի բան քո կեցոյց զիս ։
Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ․
այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ ։
Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից տէր՝
և մխիթարեցայ ։
Տրտմութիւն կալաւ զիս ՚ի մեղաւորաց,
և որք թողին զօրէնս քո ։

Գովելի էին ինձ իրաւունք քո ՚ի տեղ-
ւոջ պանդխտութեան իմոյ։
Յիշեցի ՚ի գիշերի զանուն քո Տէր.
և պահեցի զօրէնս քո։
Այս եղև ինձ ճանապարհ ՚ի կեանս.
զի զարդարութիւնս քո խնդրեցի։
Զանօրէնսն ատեցի և զօրէնս քո սիրեցի
Օգնական և փրկիչ իմ ես դու. և ես
՚ի բանս քո յուսացայ։
՚Ի բայց եղերուք յինէն չարք. և քըն-
նեցից զպատուիրանս Այ իմոյ։
Օգնեա ինձ ըստ բանի քում և կեցո
զիս. և մի յամօթ առներ զիս ՚ի յու-
սոյ իմմէ։
Օգնեա ինձ և ապրեցո զիս. և խոր-
հեցայց զիրաւունս քո յամ ժամ։
Անարգեցեր զամն որք ապստամբք ե-
ղեն յարդարութեանց քոց. զի անի-
րաւութեամբ էին խորհուրդք նոցա։
Անցաւորս համարեցայ զամենայն մե-
ղաւորս երկրի. վասն այսորիկ սիրե-
ցի զպատուիրանս քո։

Բևեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ. զի ՚ի դատաստանաց քոց երկեայ յոյժ:

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր. ըստ բանի քում իմաստուն արա՛ զիս:

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր. և բանիւ քով փրկեա՛ զիս:

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիս քո՛ յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո:

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամ պատուիրանք քո արդարութեամբ են:

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի:

Ցանկացայ փրկութեան քում Տէր. և օրէնք քո խօսք իմ են:

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ:

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո՛ զի զպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ:

Մի եկեսցեն ՚ի վերայ մեր ոտք ամ-

բարտաւանից. և ձեռք մեղաւորաց մի՛
դողացուսցեն զմեզ։
Ընդ անկցին ամենեքեան ոյք գործեն
զանօրէնութի͞ւ. մերժեսցին և այլ մի՛
կարասցեն հաստատիլ։
Ես ՚ի տէր յուսացայ. ցնծացայց և ու-
րախ եղէց յա͞ծ փրկիչ իմ։
Տէր տէր ես ինձ զօրութիւն. և կա-
ցոյց զոտս իմ ՚ի հաստատութեան. ՚ի
վերայ պարանոցի թշնամւոյն կացոյց
զիս. և հանգոյց զիս երագ երագ։
Որ բնակեալ է յօգնութի͞ւ բարձրելոյն
ընդ հովանեաւ ա͞յ յերկնից հանգիցէ։
Ասասցէ տեառն ընդունօղ իմ ես դու.
ապաւէն իմ ա͞ծ և ես յուսամ ՚ի նա։
Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին.
և ՚ի բանից ՚ի խռովութենէ։
՚Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. և
՚ի հովանի թևոց ն͞ր յուսասցիս։
Որպէս զզէն շուրջ եղիցի զքև ճշ-
մարտութիւն նորա։
Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշերի.

և ո՛չ ՚ի նետէ որ թռչի ՚ի տուէ ։
Յիրէ. որ շրջի ՚ի խաւարի . ՚ի գայ-
թակղութէ դիւլին ՚ի հասարակ աւուր ։
Անկցին ՚ի կողմանէ քումմէ հազարք .
և բիւրք ընդ աջմէ քումմէ . և առ
քեզ ինչ ո՛չ մերձեսցին ։

Բայց միայն աչօք քովք հայեսցիս
դու . և զհատուցումն մեղաւորաց տես-
ցես զի դու տէր յոյս իմ ես ։

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն .
ո՛չ հասցին առ քեզ չարք . և տան-
ջանք մի՛ մերձեսցին ՚ի յարկս քո ։

Հրեշտակաց իւրոց պատուիրեաց է վ
քո՚ի պահել զքեզ յամ ճանապարհս քո ։
՚ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ
զի մի՛ երբէք հարցես զքարի զոտն քո ։
՚ի վերայ իժից և քարբից գնասցես
դու և առ ոտն կոխեսցես զառիւծն և
զվիշապն ։

Քանզի յիս յուսացաւ և փրկեցից
զնա . հովանի եղէց նմա՛ զի ծանեաւ
զանուն իմ ։

Կարդասցէ առ իս և ես լուայց նմա. և առ նմա եղէց 'ի նեղութէ:
Փրկեցից և փառաւոր արարից զնա. երկայն աւուրբք լցուցից և ցուցից նմա զփրկութիւն իմ:
Առ քեզ տէր համբարձի զաչս իմ որ բնակեալդ ես 'ի յերկինս:
Որպէս աչք ծառայի 'ի ձեռն տեառն իւրոյ, և ոպ աչք աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ:
Այնպէս են աչք մեր առ քեզ տէր ած մեր՝ մինչև ողորմեսցիս 'ի վր մեր:
Ողորմեա մեզ տէր՝ ողորմեա մեզ. զի բազում լցաք արհամարհանօք:
Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք որք նախատէին զմեզ. և արհամարհանօք ամբարտաւանից:
Ած յանուն քում կեցո զիս. և 'ի զօրութեան քում իրաւ արա ինձ:
Ած լուր աղօթից իմոց. ունկն դիր բանից բերանոյ իմոյ:
Օտարք յարեան 'ի վերայ իմ. և հզ-

զորս խնդրեցին զանձն իմ. և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։ Այլ Աստուած օգնական իմ. և տէր ընդունող հոգւոյ իմոյ։

Ի դարձուցանել զչարն ի թշնամիս իմ, ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա։ Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում տէր՝ զի բարի է։

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս. և ի թշնամիս իմ ետես ակն իմ։

Օրհնեալ ես դու տէր Աստուած հարցն մերոց. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբութեան քո. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեալ ես ի վերայ աթոռոյ արքայութեան քո. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեալ ես որ նայիս 'ի քրօբէս և
հայիս յանդունդս · գովեալ և առա-
ւել բարձրացեալ յաւիտեան ։

Օրհնեալ ես 'ի վերայ հաստատութե̅
երկնից · գովեալ և առաւել բարձ-
րացեալ յաւիտեան ։

Օրհնեցէք զա̅ծ 'ի սրբութեան նորա ·
օրհնեցէք զնա 'ի հաստատութե̅ զօ-
րութեան նորա ։

Օրհնեցէք զնա 'ի զօրութեան նորա ·
օրհնեցէք զնա 'ի բազում մեծութե̅ ն̅ր ։

Օրհնեցէք զնա 'ի ձայն օրհնութե̅ ·
օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնութ̅բ ։

Օրհնեցէք զնա գնծութեամբ · գովե-
ցէք զնա ուրախութեամբ ։

Օրհնեցէք զնա 'ի բանս քաղցրս · գո-
վեցէք զնա 'ի բարբառ լսելիս ։

Օրհնեցէք զնա 'ի ձայն գոհութեան ·
ա̅մ հոգիք օրհնեցէք զտէր ։

Արդ արձակեա զծառայս քո տէր՝ ը̅ս
բանի քում 'ի խաղաղութիւն · զի տե-
սին աչք իմ զփրկութիւն քո զոր պատ-

րաստեցեր առաջի ամ̅ ժողովրդեան ։

Լոյս 'ի յայտնութիւն հեթանոսաց. և փառք ժողովրդե̅ն քում իսրայէլի ։

Ձգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս աջ քո. և Տէր հատուսցէ ընդ իմ ։

Տէր ողորմութիւն քո յաւիտեան. ընդ գործս ձեռաց քոց մի՛ անտես առներ ։

Տէր՝ հա՛ն 'ի բանտէ զանձն իմ. գոհանամ զանուանէ քումմէ ։

Եւ քեզ սպասեն արդարքն մինչև յաւիտեանս ։

Մեծացուսցէ անձն իմ զՏէր. և ցնծասցէ հոգի իմ յա̅ծ փրկչաւ իմով ։

Ա՛յս արար 'ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ. այսուհետև երանի- ցեն ինձ ամենայն ազգ ։

Արար ընդ իս մեծամեծս Հզօրն. և սբ̅ է անուն նորա ։

Ողորմութիւն արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց. և արար զօրութի̅ բազկաւ իւրով ։

Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց սրտ-

տից. և քակեա՛ց զհզօրս յաթոռոց ։
Զխոնարհս բարձրացոյց. զկարօտս ե-
լից բարութեամբ. և զմեծատունս ար-
ձակեաց ունայնս ։

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի Իւ-
րոյ՝ յիշելով զողորմութիւն Իւր ։

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր՝ ընդ-
աբրահամու և զաւակի նորա յաւիտեան ։

Տո՛ւր զօրութիւն ծառայի քո. կեցո՛
զորդի աղախնոյ քոյ. և արա՛ առ իս
նշան բարութեան ։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն. զի
դու տէր օգնեցեր ինձ և մխիթարե-
ցեր զիս ։

Փառք Հօր և որդւոյ և հոգւոյն սր-
բոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յա-
ւիտենից, ամէն ։

## Մաղթանք ։

Անձն իմ 'ի ձեռս քո է յամ
ժամ. և 'ի սուրբ խաչ քո յուսացեալ
եմ Թագաւոր երկնաւոր. զբազմութիւն

սրբոյ քոյ բարեխօս ունիմ առ քեզ ։ Որ երկայնամիտդ ես առ ամենեսեան՝ մի անտես առներ զապաւինեալս 'ի քեզ. այլ պահեա պատուական և սբ խաչիւ քով 'ի խաղաղութեան ։

Քարոզ ։

Աղաչեսցուք զամենակալն Ած և խնդրեսցուք 'ի նմանէ զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս ․ 'ի դիւական խռովութենէ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև 'ի կատարումն ժամանակի ամաց մերոց ․ ամենակալ տէր Ած մեր կեցո և ողորմեա ։

Զհանգիստ գիշերիս խաղաղութեն և փրկութեան անձանց մերոց 'ի տեառնէ խնդրեսցուք ։

Զհրեշտակ խաղաղութեան և պահապան անձանց մերոց 'ի տեառնէ խնդրեսցուք ։

Զքաւութիւն և զթողութիւն յանցա-
նաց մերոց ՚ի տեառնէ խնդրեսցուք ։
Զսրբոյ խաչին մեծ և կարող զօրութ՟
և օգնութիւն անձանց մերոց ՚ի տեառ-
նէ խնդրեսցուք ։
Եւ ևս միաբան վասն Ճշմարիտ և ս՟բ
հաւատոյս մերոյ ՚ի տ՟նէ խնդրեսցուք ։
Զանձինս մեր և զմիմեանս տեառն ա՟յ
ամենակալին յանձն արասցուք ։
Ողորմեաց մեզ տէր ա՟ծ մեր ըստ մեծի
ողորմութեան քում, ասասցուք ամենե-
քեան միաբանութեամբ տէր ողորմեա՛
տէր ողորմեա՛ տէր ողորմեա՛ ։

## Աղօթք ։

Տէր ա՟ծ մեր դու պահեա՛ զմեզ խաղաղութեամբ ՚ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի ։ Ընդ ս՟բ երկիւղ քո բևեռեալ պահեա՛ զմիտս և զխորհուրդս մեր ։ Որպէս զի յամենայն ժամ քև պահպանեալ լիցուք յարոգայթից թշնամւոյն ։ Եւ քեզ հան-

կուք զօրհնութիւն և զփառս հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Հրեշտակի խաղաղութեան յանձն արա՛ զանձինս մեր տէր զօրութեանց ։ Որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ՝ի տուէ և ՝ի գիշերի․ յարթնութե՟ և ՝ի հանգստութե՟ն մերում․ զի դու ես արարիչ լուսոյ և հաստիչ գիշերի ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր ա՟ծ մեր՝ զհանգիստ գիշերիս շնորհեա՛ խաղաղութեամբ անցուցանել․ և հասանիլ ՝ի պաշտօն առաւօտու յերկրպագութի՟ և ՝ի փառաբանութի՟ ամենասուրբ երրորդութեանդ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Սաղմոս, 4 ։

Խաղաղութեամբ յայս և ՝ի սոյն ննջեսցուք և զարթիցուք․ զի դու տէ՟ր

միայն առանձին յուսով քով բնակե-
ցուցեր զմեզ ։

Ի կարդալ իմում լուար ինձ ա͞ծ ա͞ր ար-
դարութե. ՚ի նեղութեան ինձ անդորր արա-
րեր. ողորմեա ինձ և լուր աղօթից իմոց ։

Ո՛րդիք մարդկան մինչև յե՞րբ էք խս-
տասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութի
և խնդրէք զստութիւն ։

Ծաներո՛ւք զի սքանչելիս արար Տէր
սրբոյ իւրում. և Տէր լուիցէ ինձ ՚ի
կարդալ իմում առ նա ։

Բարկանայք և մի՛ մեղանչէք. զոր ինչ
ասէք ՚ի սիրտս ձեր, յանկողինս ձեր
զղջացարո՛ւք ։

Մատուցէ՛ք պատարագս արդարութեան
և յուսացարո՛ւք ՚ի Տէր ։

Բազումք ասեն թէ ո՞ ցուցցէ մեզ
զբարութիւն Տեառն. նշանեցաւ առ
մեզ լոյս երեսաց քոց. և ետուր ուրա-
խութիւն սրտից մերոց ։

Ի պտղոյ ցորենոյ գինւոյ ձիթոյ իւ-
րեանց լցուցեր զնոսա ։

խաղաղութեամբ յայս և 'ի սոյն ննջեսցուք և զարթիցուք. զի դու տէր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։

Ալէլուիայ Օրթի։
Խաղաղութիւն Ամենեցուն։
Եւ ընդ հոգւոյդ քում։
Երկիւղածութեամբ լուարուք։
Սրբոյ Աւետարանին որ ըստ Յոհաննու։
Փառք քեզ տէր Աստուած մեր։
Պռօսխումէ։ Ասէ Տէր։
Տէրն Էր Յ Գ առէ

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ։ Ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ։ Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. և որ ատէ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, 'ի կեանս յաւիտենականս պահեսցէ զնա։ Եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր եսն եմ, անդ

և պաշտօնեայն իմ եղիցի։ Եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։

Փառք քեզ տէր ած մեր։

Սբ խաչիւս աղաչեսցուք զտէր՝ զի սովաւ փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց. և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ տէր ած մեր կեցո և ողորմեա։

Աղօթք։

Պահպանեա զմեզ քս ած մեր ընդ հովանեաւ սբ և պատուական խաչիւդ քով ՚ի խաղաղութեան. փրկեա յերևելի և յաներևոյթ թշնամեաց։ Արժանաւորեա գոհութեան փառաւորել զքեզ ը հօր և ը սրբոյ հոգւոյդ. այժմ և մշ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Օրհնեալ տէր մեր յս քս. ամէն։

Հայր մեր որ յերկինս"։

Անկանիմք առաջի քո սբ Ածածին, և աղաչեմք զանարատ զկոյսդ. բարե-

խօսեմ վասն անձանց մերոց. և աղաչեմ զմեծածին որդիդ՝ փրկել զմեզ ՚ի փորձութէ և յամենայն վտանգից մերոց: Որ արժանիլիջդ ես կապելոյ՝ պարգևատու ամենեցուն. այսօր հայցմամբ ծերունոյն՝ արժանեա՛ և զիս զբազմամեղս ՚ի կապանաց մահու ՚ի կեանսն յաւիտենից:

Մաղթանք զօրաւորք ընդդէմ արհաւրաց գիշերայնոց : Ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն : ԺԲ :

Ընկալ քաղցրութեամբ՝ տէր աստուած հզօր՝ զդառնայողիս զաղաչանս. մատի՛ր գթութե՝ առ պատկառեալս դիմօք. փարատեա՛ ամենապարգև, զամօթական տխրութիւնս. բա՛րձ յինէն՝ ողորմած, զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա՛ հնարաւոր, զմահացու կրթութիւնս. աւարեա՛ մի՛շտ յաղթօղ զխաբողին հաճութիս. բացադրեա՛ վե՛րնայինդ զմոլելոյն. մառա-

խուղ. կնքեա՛ կենցաղիս, զկորուսչին ընթացմունս. կրուեա՛ ծածկատես, զըմ-բռնողին չար գթմունս. խորտակեա՛ մնքնին, զմարտողին զխժդմունս: Տեռ-նագրեա՛ քո անուամբդ՝ զլուսանցոյց երդ-յարկիս. պարփակեա՛ քո ձեռամբդ՝ զաւատաղ տաճարիս. գծագրեա՛ քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս. կեր-պարա՛ զքո նշանդ՝ 'ի հետս ելից մար-թոյս. ամրացո՛ քո աջովդ՝ զհանգրու-ցեանս խշտիս. մաքրեսցես 'ի հալ-բից՝ զծածկարան անկողնոյս. պահես-ցես քո կամօքդ՝ զտառապեալ անձն հոգ-ւոյս. անխարդախ արասցես՝ զքո շըն-նորհեալ շունչ մարմնոյս. կացուսցես շրջապարիսպ. զպար զօրուդ երկնայնոյ. կարգեսցես 'ի դիմի՝ ընդդէմ դիւային դասու: Տո՛ւր հանգիստ երկրութե̃ մահահանգոյս նիրհման 'ի խորութե̃ գիշերիս, բարեխօսութեամբ և հայ-ցուածովք սրբուհոյ Ա̃ծածնիդ՝ և ամ̃ ընտրելոց: Ամփոփեալ պարուրեա՛ ըզ-

պատուհան տեսութեց՝ զգայարանացս
խմաստից ։ Անզարհուրելի զետեղմամբ,
՚ի ծփական խռովութեանց, կենցաղա-
կան զբաղմանց, անրջական երազոց, խո-
բականաց ցնորից, յիշատակաւ քո յու-
սոյդ՝ անճմասելի պաշտպանեալ ։ Եւ
սթափեալ վերստին ՚ի ննջմանէ ծան-
րութե՝ ամենազգաստ արթնութբ, հո-
գեւորոգ զուարթութբ ՚ի քեզ արձա-
նացեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուր-
մամբ հաւատոյ՝ քեզ ամենօրհնեալ
Թագաւոր փառաց անճառից, փառա-
բանողաց երկնագումար խմբից երգակ-
ցեալ՝ յերկինս առաքել ։ Զի դու փա-
ռաւորեալ ես յամ արարածոց յաւի-
տեանս յաւիտենից, ամէն ։

## Աղօթք շնորհաւոր՝ նորին սրբոյն Գրիգորի ։

## ՂԴ ։

Ա՜Ծ յաւիտենական. բարերար և
ամենակալ. ստեղծիչ լուսոյ, և յօ-

ընկիչ գիշերոյ. կեանք 'ի մահու, և
լոյս 'ի խաւարի. յոյս ակնունողաց, և
երկայնմտութն տարակուսելոյ, որ ա-
մենարուեստ իմաստութեամբ քո՛ դար-
ձուցանես յայգ զստուերս մահու, ան-
նուազ ծագումն և անմուտ արեգակն,
քանզի ո՛չ զօրէ ծածկել զփառս տէ-
րութեան քո՛ խաւար գիշերոյ: Որ-
ում կրկնի ծունր երկրպագութէ տմ
եղելոյ՝ երկնաւորաց և երկրաւորաց,
և սանդարամետականաց. որ լսես ըղ-
հեծութիւն կապելոյ, և հայիս յա-
ղօթս խոնարհաց, և ընդունիս զխըն-
դրուածս նոցա. ած իմ և թագաւոր
իմ. կեանք իմ և ապաւէն իմ. յո՛յս
իմ և վստահութիւն իմ. յս քս ածդ
ամի. սբդ հանգուցեալ 'ի հոգիս
սրբոց, մխիթարութիւն վշտաց. և
քաւարան մեղուցելոց, որ գիտես զամ
յառաջ քան զլինիլ նոցա. առաքեա՛
զպահպանողական զօրութն աջոյ քոյ,
և փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի և 'ի

դիւէ չարէ ։ Որպէս զի՛ զյիշատակ սոսկալի և սբ̃ քո անուանդ՝ միշտ համ-բուրեալ շրթամբք հոգւոյ՝ ըղձութե̃ն շնչո՛յ, կեցից պահպանեալ ընդ այնո-սիկ՝ որք կարդան զքեզ ՚ի բոլոր սրտէ ։ Եւ ՚ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ, զոր աստուածային արեամբ քո ներ-կեալ նորոգեցեր, և ՚ի նոյն շնորհ որդեգրութե̃ն զմեզ մկրտեցեր, և ՚ի փառս պատկերի քո նկարեալ յօրի-նեցեր · այսու պարգևօք ծածկանօք, ամաչեսցէ սատանայ · քակտեսցին մե-քենայքն · բարձցին որոգայթք · պար-տեսցին մարտուցեալքն · պակասեսցին զէնքն սայրասուրք · մերժեսցի մէգն · փարատեսցի խաւարն · մեկնեսցի մառա-խուղն ։ Բազուկ քո հովանասցի, և աջ քո կնքեսցէ · վասն զի գթած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է ՚ի վերայ ծառայից քոց, և քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով՝ փառք և իշ-խանութի յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

## ԽԱ :

Որդի աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յամենայնի, հօրդ ահաւորի անքննելի ծնունդ · որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ : Որ 'ի ծագել անստուեր նշուլից · ողորմութեան քո փառաց, հալին մեղք · հալածին դեւք · ջնջին յանցանք · լուծին կապանք, խորտակին շղթայք · կենդանանային մահացեալք · բժշկին հարուածք · ողջանան վէրք · բառնին ապականութիւնք · տեղի տան ախտութիւնք · նահանջին հեծութիւնք · փախնու խաւարն · մեկնի մէգն · մերժի մառախուղն · փարատի մռայլն · սպառի աղջամուղջն · վերանայ մութն · գնայ գիշերն · տարագրի տագնապն · չքանան չարիքն · հալածին յուսահատութիւնքն · և թագաւորէ ձեռն

քո ամենակար՝ քաւիչդ ամ̃ի :

Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան

հոգիս, այլ կեցուցանել. Թող ինձ զամ թիւ չարեաց իմ՝ բազում ողորմութեամբ. զի դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անզննին. ՚ի տաճար գոյի, և յեզրս ծագաց էի. սկիզբն ամի, և յամի. ամ լրմամբ օրհնեալ ՚ի բարձունս. և քեզ ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ փառք՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք խոստովանողաց անձանց հաւատացելոց ՚ի Քս: Զորս արարեալ է տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի:

Հաւատով խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ Հայր և Որդի և սուրբ Հոգի. անեղ և անմահ բնութիւն. արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց: Ողորմեա՛ քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս:

Հաւատով խոստովանիմ՝ և երկիր-պագանեմ՝ քեզ անբաժանելի լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն և մի Աստ-

ութիւն, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա՛ 'ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան. և լուսաւորեա՛ զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ 'ի հաճոյս և ընդունիլ 'ի քէն զխնդրուածս իմ. և ողորմեա՛ քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս:

Հա՛յր երկնաւոր՝ ած ճշմարիտ, որ առաքեցեր զորդիդ քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քո. ընկա՛լ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջին, զոր մերկացայ մեղօք. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Որդի՛ այ՝ ած ճշմարիտ՝ որ խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ, և առեր. մարմին 'ի սրբոյ կուսէն մարիամայ, վս մերոյ փրկութեան. խաչեցար՝ թաղեցար՝ և յարեար 'ի մեռելոց՝ և համբարձար փառօք առ հայր. մեղայ յեր-

կենս և առաջի քո․ յիշեա՛ զիս որպէս զաւազակն՝ յորժամ գաս արքայութեամբ քով․ և ողորմեա՛ քո արարածոյս՝ և ինձ բազմամեղիս ։

Հոգի՛ սբ՝ ած ճշմարիտ, որ իջեր ՚ի յորդանան և ՚ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին․ մեղայ յերկինս և առաջի քո․ մաքրեա՛ զիս վերստին ածային հրով քով, որպէս հրեղէն լեզուօք սբ զառաքեալսն․ և ողորմեա՛ քո արարածոյս և ինձ բազմամեղիս ։

Անեղ բնութիւն, մեղայ քեզ՝ մտօք իմովք՝ հոգւով և մարմնով իմով․ մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վասն անուանդ քում՝ սրբոյ․ և ողորմեա՛ քո արարածոյս և ինձ բազմամեղիս ։

Տեսօղ ամն՝ մեղայ քեզ, խորհրդով բանիւ և գործով․ ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց՝ և գրեա՛ զանուն իմ ՚ի դպրութեան կենաց․ և ողորմեա՛ քո արարածոյս և ինձ բազմամեղիս ։

Քննօղ գաղտնեաց՝ մեղայ քեզ, կամաւ և ակամայ՝ գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն շնորհեա մեղաւորիս. զի ՝ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր՝ մեղուցեալ եմ առաջի ածութեդ քո. զգայարանօք իմովք՝ և ամ անդամօք մարմնոյս. և ողորմեա քո արարածոյս և ինձ բազմամեղիս ։

Ամենախնամ տէր՝ դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ ևս հայիլ յարատ. և ականջաց իմոց ոչ ախորժել լսել զբանս չարութեան. և բերանոյ իմոյ ոչ խօսիլ զստութի. և սրտի իմոյ ոչ խորհիլ զչարութի. և ձեռաց իմոց ոչ գործել զանիրաւութիւն. և ոտից իմոց ոչ գնալ ՝ի ճանապարհս անօրէնութե. այլ ուղղեա զշարժումն սոցա լինել ըստ պատուիրանաց քոց յամի. և ողորմեա քո արարածոյս և ինձ բազմամեղիս ։

Հո՛ւր կենդանի քրիստոս՝ զհուր սի-

րոյ քոյ, զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛ յանձն իմ. զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց՝ և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ. և վառեսցէ զլոյս գիտութեան քո ՚ի սրտի իմում. և ողորմեա՛ քո արարածոյս և ինձ բազմամեղիս :

Իմաստութի՛ւն հօր յա՟, տո՛ւր ինձ իմաստութիւն՝ զբարիս խորհիլ և խօսիլ. և գործել առաջի քո յա՟մ ժամ. ՚ի չար խորհրդոց՝ ՚ի բանից և ՚ի գործոց փրկեա՛ զիս. և ողորմեա՛ քո արարածոյս և ինձ բազմամեղիս :

Կամեցօղ բարեաց՝ տէր կամարար՝ մի՛ թողուր զիս ՚ի կամս անձին իմոյ գընալ. այլ առաջնորդեա՛ ինձ լինիլ միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողորմեա՛ քո արարածոյս և ինձ բազմամեղիս :

Արքա՛յ երկնաւոր՝ տո՛ւր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց քոց՝ և զօրացո՛ զսիրտ իմ ատել

զմեղս, և սիրել զքեզ միայն՝ և առնել զկամս քո. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս ։

Խնամօղ արարածոց՝ պահեա՛ ի նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ. ՚ի պատրանաց մեղաց՝ ՚ի փորձութենէ դիւաց՝ և ՚ի մարդոց անիրաւաց. և յա̃մ վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս ։

Պահապա՛ն ա̃մի ք̃ս՝ աջ քո հովանի լիցի ՚ի վերայ իմ ՚ի տուէ և ՚ի գիշերի. ՚ի նստիլ ՚ի տան՝ ՚ի գնալ ՚ի ճանապարհ, ՚ի ննջել և ՚ի յառնել՝ զի մի՛ երբէք սասանեցայց. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս ։

Ա̃ծ իմ, որ բանաս զձեռն քո և լնուս զա̃մ արարածս ողորմութ̃բ քով. քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա և պատրաստեա՛ զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմ հետէ մինչև

յաւիտեան. և ողորմեա՛ քո արարածոյս
և ինձ բազմամեղիս ։

Դարձուցի՛չ մոլորելոց՝ դարձո՛ զիս ՚ի չար սովորութեանց իմոց ՚ի բարի սովորութիւն. և բևեռեա՛ ՚ի հոգի իմ զսոսկալի օր մահուն՝ և զերկիւղ գեհենոյն՝ և զսէր արքայութեն. զի զղջացայց ՚ի մեղաց՝ և գործեցից զարդարութիւն. և ողորմեա՛ քո արարածոյս և ինձ բազմամեղիս ։

Աղբի՛ւր անմահութեան՝ աղբերացո՛ ՚ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և ողորմեա՛ քո արարածոյս և ինձ բազմամեղիս ։

Պարգևի՛չ ողորմութեան՝ պարգեւեա՛ ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով. և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. և ողորմեա՛ քո արարածոյս և ինձ բազմամեղիս ։

Բարեխօս տէ՛ր՝ հրեշտակին բարւոյ յանձն արասցես զիս . քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն որք են 'ի ներքոյ երկնից . և ողորմեա՛ քո

արարածոցս և ինձ բազմամեղիս ։

Լո՛յս ճշմարիտ քրիստոս՝ արժանաւորեա՛ զհոգի իմ՝ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց, 'ի կոչման աւուրն . և հանգչիլ յուսով բարեաց յօթևանս արդարոց՝ մինչև յօր մեծի գալստեանն քո . և ողորմեա՛ քո արարա-

ծոցս և ինձ բազմամեղիս ։

Դատաւո՛ր արդար՝ յորժամ գաս փառօք հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում . այլ փրկեա՛ զիս 'ի յաւիտենական հրոյն . և լսելի՛ արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ . և ողորմեա՛ քո

արարածոցս և ինձ բազմամեղիս ։

Ամենողորմ տէ՛ր՝ ողորմեա՛ ամենայն

հաւատացելոց 'ի քեզ. իմոց և օտա-
րաց՝ ծանօթից և անծանօթից՝ կենդա-
նեաց և մեռելոց. շնորհեա՛ և թշնա-
մեաց իմոց և ատելեաց զթողութի՛ որք
առ իս յանցանեն. և դարձո՛ զնս 'ի չա-
րեաց զոր ունին վն իմ, զի ողորմու-
թեան քում արժանի եղիցին. և ողոր-
մեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Փառաւորեալ տէ՛ր՝ ընկա՛լ զաղա-
չանս ծառայիս քո. և կատարեա՛ 'ի
բարի զխնդրուածս իմ, բարեխօսութբ
սրբուհւոյ Ածածնին և Յովհաննու
Մկրտչին. և սրբոյն Ստեփաննոսի նա-
խավկային. և սրբոյն Գրիգորի մերոյ
Լուսաւորչին. և սրբոց առաքելոց՝
մարգարէից՝ վարդապետաց՝ մարտիրո-
սաց՝ և սբց հայրապետաց՝ ճգնաւորաց՝
կուսանաց՝ և միանձանց. ամ սբց քոց՝
երկնաւորաց և երկրաւորաց: Եւ քեզ
փառք և երկրպագութիւն անբաժա-
նելի սուրբ Երրորդութեանդ յաւի-
տեանս յաւիտենից, ամէն:

## Մաղթանք ։

Վասն սրբուհւոյ անարատ մօր քոյ և կուսի՝ տէր ընկա՛լ զաղաչանս մեր և կեցո՛ զմեզ ։

## Քարոզ ։

Սբ զածածինն՝ և զամ սուրբս բարեխօս արասցուք առ հայր՝ ի յերկինս՝ զի կամեցեալ ողորմեսցի՝ և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր․ ամենակալ տէր ածն մեր կեցո՛ և ողորմեա՛ ։

## Աղօթք ։

Ընկա՛լ տէր զաղաչանս մեր՝ բարեխօսութբ սրբուհւոյ ածածնին անարատ ծնողի միածնի Որդւոյ քո․ և աղաչանօք ամ սրբոց քոյ․ և որոց այսօր է յիշատակ ։ Լո՛ւր մեզ տէր և ողորմեա՛, ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր ։ Արժանաւորեա՛ գոհութբ փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ

սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից, ամէն ։
Օրհնեալ տէր մեր և փրկիչ յս̅ քս̅,
ամէն ։ Հայր մեր որ յերկինս՝՝ ։

Մաղթանք ։

Զհանգստեան աղօթս և զաղաչանս ընկալ մարդասէր ա̅ծ̅ ՚ի հաճոյս՝ բարերար կամաց քոց ։ Եւ մեր մեղաց և բազում յանցանաց թողութիւն շնորհեա. և քեզ փառք յաւիտեանս ամէն ։

Փառք քեզ տէր ա̅ծ̅ մեր որ պարգևեցեր զօրս զայս բարեաւ և խաղաղութեամբ անցուցանել ։ Մարդասէր ա̅ծ̅ զառաջիկայ գիշերս որ ՚ի վ̅ր̅ մեր գալոցէ՝ ՚ի մեղաց փրկեա. ՚ի չարեաց ազատեա. և ՚ի գործս բարիս առաջնորդեա ։ Առաւօտու օրհնութեան և փառաբանութեանցն արժանի արա զմ̅զ̅ հաւատացեալս անուանդ քում սրբոյ. և պահեա ՚ի խաղաղութե̅ ։ Տէր ա̅ծ̅ մեր տուր զքո խաղաղութիւ̅դ ա̅մ̅ աշ-

խարհի․ բա́րձ զցասումն և զպատու-հասն ՚ի յարարածոց քոց։ Ողորմեա́ց հարց և եղբարց մերոց․ կենդանեաց և հանգուցելոց։ Ողորմեա́ց զեկեղեցւո չինողաց․ երախտաւորաց՝ պտղատուից սպասաւորաց․ և այնոցիկ որք ընդ հո-վանեաւ սրբոյ տաճարիս են հանգու-ցեալ։ Տէր Աստուած՝ օգնեա́ թագաւորաց քրիստոնէից և իշխանացն բարեպաշ-տից․ զօրաց և զաւակաց նոցին՝ պա-հելով ՚ի խաղաղութեան։ Տէր Աստուած մեր պահեա́ զառաջնորդս և զեղբայրութիւն մեր ամբողջ և անխախտ ՚ի կամս ողոր-մութեան քո։ Նշանաւ սուրբ և պա-տուական խաչի քո՝ հալածեա́ զերևե-լի և զաներևոյթ թշնամիս ՚ի սահմա-նաց մերոց և ՚ի բնակութենէս մերմէ։ Փրկեա́ զմեզ ՚ի հրոյն յաւիտենից․ և քեզ փառք յաւիտեանս, ամէն։

Օրհնեսցուք եղբարք ՚ի շնորհաց սրբոյ Հոգւոյն․ հանգերուք խաղաղութեամբ․ և Տէր եղիցի ընդ ամենեսեանն, ամէն։

# ԶՂՋՈՒՄՆ·

Մեղա՛յ ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Մեղուցեալ եմ ա̃յ։ Խոստովանիմ առաջի ա̃յ՝ և սրբուհւոյ ա̃ծածնին՝ և առաջի քո հայր սուրբ՝ զա̃մ մեղս զոր գործեալ եմ՝։ Քանզի՝ մեղա՛յ խորհրդով բանիւ և գործով· կամայ և ակամայ· գիտութեամբ և անգիտութ̃բ մեղա՛յ ա̃յ։

Մեղա՛յ հոգւովս և զօրութ̃բ սորա· մտօքս և շարժմամբ սորա· մարմնովս և զգայութ̃բ սորա մեղա՛յ ա̃յ։

Մեղա՛յ զօրութեամբ հոգւոյս· խորամանկութեամբ· անզգամութեամբ· յանդգնութեամբ և երկչոտութեամբ· շռայլութեամբ և ժլատութ̃բ· զեղխութեամբ և անիրաւութեամբ· չարահաւանութ̃բ· յուսահատութ̃բ և թերամտութեամբ՝ մեղա՛յ ա̃յ։

Մեղա՛յ չար խորհրդով մտացս· նեն-

գութեամբ․ ատելութեամբ․ խեթիւ․ մախանօք․ յաչաղանօք․ թուլութ̅ի̅․ պոռնկական խորհրդով․ արուական․ իգական․ անասնական․ գրաստական․ գազանական․ ՚ի գիշերի և ՚ի տունջեան երազական գիճութեամբ և յանըջական գարշ աղտեղութ̅ի̅ մեղայ ա̅յ̅։

Մեղայ ցանկութ̅ի̅ մարմնոյս հեշտութեամբ․ պղերգութ̅ի̅․ յօրանջմամբ քնոյ՝ շարժութեամբ մարմնոյս և կազրագործութեամբ ՚ի պէսպէս ախտս․ հեշտալրութ̅ի̅ լսելեացս․ արատութ̅ի̅ աչացս․ ցանկութեամբ սրտիս․ իգութ̅ի̅ ռնգացս․ պագշոտութեամբ բերանոյս․ անժուժկալութեամբ․ շուայտութ̅ի̅, և արբեցութ̅ի̅՝ մեղայ ա̅յ̅։

Մեղայ չարաբանութեամբ լեզուիս․ ստախօսութեամբ․ սուտ երդմամբ․ երդմնազանցութեամբ․ հակառակութ̅ի̅․ վիճաբանութ̅ի̅․ բանսարկութ̅ի̅․ շոգմոգութ̅ի̅․ քսու․ դատարկաբանութ̅ի̅․ և ծաղր․ զրախօսութեամբ․ հեր֊

ձախօսութեամբ. և անիծաբանութբ. տրտնջելով. դժգոհելով. բամբասելով. և հայհոյելով՝ մեղայ ա՟յ ։

Մեղայ գողութեամբ ձեռացս. ագահելով. զրկելով. հարկանելով. ապականելով, և ընդ գարշս ածելով՝ մեղայ ա՟յ ։

Մեղայ ամ՟ յօդուածովք շինուածոյս և ամ՟ անդամօք մարմնոյս. եօթնեակ զգայարանօքս և վեցեկի շարժմամբս. վերամբարձ ոտնահարութբ, և վայրաքարշ մեղկութեամբ. յաջ և յահեակ խոտորելով. առաջնոյն մեղանչելով, և վերջնոյն չար նշաւակ գոլով՝ մեղայ ա՟յ ։

Այլ և մեղայ եօթնից յանցանօք մահացու մեղօք ։ Հպարտութեամբ և մասամբք նորին ։ Նախանձու և մասամբք նորին ։ Բարկութեամբ և մասամբք նորին ։ Ծուլութբ և մասամբք նորին ։ Ագահութբ և մասամբք նորին ։ Որկրամոլութեամբ և մասամբք նորին ։

Բղջախոհութեամբ և մտամբք նորին՝
մեղայ ա̃յ ։

Այլ և մեղայ ա̃մ պատուիրանացն ա̃յ. յանձնառելեացն և հրաժարելեացն. զի ոչ զյանձնառականսն կատարեցի և ոչ՝ ի հրաժարելեացն հեռացայ ։ Զօրէնս առի՝ և յօրինացն հեղգացայ. ՝ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ՝ և գործովս անարժան գտայ. գիտելով զչարն՝ կամաւ կորայ. և ՝ի բարեաց գործոց ինքէն հեռացայ. վա՜յ ինձ. վա՜յ ինձ. վա՜յ ինձ. Զո՞րն ասեմ, կամ զո՞րն խոստովանիմ. զի անթիւ են յանցանք իմ. անասելի են անօրէնութիւնք իմ. աններելի են ցաւք իմ. և անբժշկելի են վէրք իմ, մեղայ ա̃յ ։

Հա՛յր սուրբ՝ զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ միածին որդին ա̃յ. զի իշխանութեամբդ որ տուեալ է քեզ՝ արձակեսցես զիս ՝ի կապից մեղաց իմոց աղաչեմ զքեզ ։

# ԵՕԹՆ
# ՍԱՂՄՈՍՔ
# ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ։

Սաղմոս. Ե։

Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։

Ողորմեա՛ց ինձ տէր զի հիւանդ եմ ես. բժշկեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։

Անձն իմ յոյժ խռովեցաւ. և դու տէր, մինչև յերբ։

Դա՛րձ տէր, և փրկեա՛ զանձն իմ,
կեցո՛ զիս տէր ըստ ողորմութ̃ն քում ։
Զի ո՛չ ոք է՝ որ ՚ի մահու յիշէ զքեզ,
կամ ՚ի դժոխս խոստովան առնիցի
առ քեզ ։

Վաստակեցայ ես ՚ի հեծութ̃ն իմում,
լուացի զա̃մ գիշեր զմահիճս իմ, և
արտասուօք իմովք զանկողինս իմ թացի
Խռովեցաւ ՚ի սրտմտութենէ ակն իմ.
և մաշեցայ ես ՚ի վերայ ա̃մ թշնամեաց իմոց ։

՚Ի բա՛ց կացէք յինէն ամենեքեան, որք
գործէք զանօրէնութիւն ։

Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ
տէր աղօթից իմոց, և տէր զխնդրուածս իմ ընկալաւ ։

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ա̃մ
թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի, և խռովեսցին ։ Փառք հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

## Սաղմոս. ԼԱ:

Երանի, որոց թողութիւն եղեւ մեղաց, եւ ծածկեցան ամ յանցանք նոցա:
Երանի առն, որում ոչ համարի տէր զմեղս նորա, եւ ոչ գոյ նենգութիւն ՚ի բերան նորա:
Լռեցի ես, եւ մաշեցան ամ ոսկերք իմ առ աղաղակել ինձ առ տէր զօրհանապազ ՚ի տուէ, եւ ՚ի գիշերի:
Ծանրացաւ ձեռն քո ՚ի վերայ իմ. դարձայ ՚ի թշուառութիւն իմ, զի հարան յիս փուշք:
Զմեղս իմ ցուցի քեզ, եւ զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցի ՚ի քէն:
Ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ. եւ դու թողցես զամ ամբարշտութիւնս մեղաց իմոց:
Վա այսորիկ յաղօթս կացցեն առ քեզ ամենայն սուրբք ՚ի ժամ ընդունելի:
Բայց միայն ՚ի ջուրցն հեղեղաց բազմաց. որք առ նոսա ինչ ոչ մերձենան:

Դու ես ապաւէն իմ 'ի նեղութենէ յայսմանէ, որ շուրջ եղեւ զինեւ ։

Ցնծութիւն իմ փրկեա զիս յայնցանէ, որք պաշարեցին զիս ։

Իմաստուն արարից զքեզ, և խելամուտ 'ի ճանապարհի յոր և գնասցես, և հաստատեցից 'ի վերայ քո զաչս իմ ։

Մի լինիք որպէս զձի, և զջորի, զի ոչ գոյ 'ի նոսա իմաստութիւն, 'ի սանձս և 'ի դանդանաւանդս ձմլեսցես զկզակս նոցա, որք առ քեզ ինչ ոչ մերձեսցին ։

Բազում տանջանք են մեղաւորաց, բայց որք յուսան 'ի տէր, ողորմութիւն ան շուրջ եղիցի զնոքօք ։

Ուրախ լերուք և ցնծացէք արդարք, 'ի տէր պարծեցարուք ամենեքեան, որք ուղիղ էք սրտիւք ։

Փառք հօր, և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

## Սաղմոս. ԼԷ:

Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի՛ բարկութբ քով խրատեր զիս:

Զի նետք քո հարան յիս, և յիս հաստատեցաւ ձեռն քո:

Ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց բարկութեան քոյ:

Ո՛չ է խաղաղութի ոսկերաց իմոց յերեսաց մեղաց իմոց:

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, որպէս զբեռն ծանր ծանրացան 'ի վերայ իմ:

Նեխեցան, և փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ:

Տառապեցայ, և խոնարհ եղէ մինչև յոյժ, զօրհանապազ տրտում գնայի, զի անձն իմ լի եղև չարչարանօք, և ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ:

Զարչարեցայ, և խոնարհ եղէ մինչև յոյժ, մռնչէի առ հեծութե սրտի իմոյ:

Տէր առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ, և հեծութիւն իմ ՚ի քէն ոչ ծածկեցաւ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս, և եթող զիս զօրութիւն իմ. լոյս աչաց իմոց, և այս ոչ եղև ընդիս։

Բարեկամք իմ, և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան, և կացին, և մերձաւորք իմ հեռի եղեն յինէն։

Բռնադատէին զիս, և խնդրէին զանձն իմ, որք խորհէին չար ՚ի վերայ իմ, խորհեցան զանօրէնութիւն և զնենգութիւն զօրհանապազ խորհեցան։

Այլ ես որպէս խուլ զի ոչ լսէ, և որպէս համր որ ոչ բանայ զբերան իւր։

Եղէ ես որպէս զմարդ, որ ոչ լսէ. և ոչ գոն խօսք ՚ի բերան նորա։

Ես ՚ի քեզ Տէր յուսացայ, և դու լուիցես ինձ Տէր Աստուած իմ։

Ասացի թէ մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. ՚ի սասանիլ ոտից իմոց ՚ի վերայ իմ մեծամեծս խօսեցան։

Ես 'ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։
Զանօրէնութիւնս իմ պատմեցից, և հոգացայց վասն մեղաց իմոց։
Իսկ արդ թշնամիք իմ կենդանիք են, և զօրացեալք են քան զիս, և բազումք են, որք ատեն զիս 'ի տարապարտուց։
Որք հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ, չարախօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարութեան։
Մի թողուր զիս տէր ած իմ, և մի 'ի բացեայ առնիր յինէն, հայեաց յօգնել ինձ տէր փրկութեան իմոյ։
Փառք Հօր և որդւոյ և Հոգւոյն"։

## Սաղմոս. Ծ.

Ողորմեա ինձ ած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։
Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. և 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ տէր. և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս ՚ի բանս քո. և յաղթեսցես ՚ի դատել քո։

Անօրէնութեամբ յղացայ, և ՚ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս և զծածկեալս իմաստութեան քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա՛ յիս մշտկաւ, և սուրբ եղէց. լուա՛, և քան զձիւն սպիտակ եղէց. Լսելի արա ինձ զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց. և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն. Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս Աստուած, և զհոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում։ Մի՛ ընկեներ զիս տէր յերեսաց քոց,

և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն ։
Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութե՟ քոյ ·
և հոգւով պետութեան քոյ հաստա-
տեա՛ զիս ։
Ուսուցից անօրինաց զճանապարհս քո ·
և ամպարիշտք առ քեզ դարձցին ։
Փրկեա՛ զիս յարենէ ա՟ծ ա՟ծ փրկութե՟
իմոյ · ցնծասցէ լեզու իմ յարդարու-
թեան քում ։
Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բե-
րան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո ։
Թէ կամեցեալ էիր, պատարագս մա-
տուցանէաք · բայց դու ընդ ողջակէզս
իսկ ոչ հաճեցար ։
Պատարագ ա՟յ հոգի խոնարհ · զսիրտ
սուրբ և զհոգի խոնարհ ա՟ծ ոչ ար-
համարհէ ։
Բարի՛ արա տէր կամօք քովք սիոնի ·
և շինեսցին պարիսպք երուսաղեմի ։
Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս
արդարութե՟ · յորժամ ուխտից պատա-
րագս հանցեն ՚ի սեղան քո զուարակս ։

## Սաղմոս. ՃԱ։

Տէ՛ր լո՛ւր աղօթից իմոց, և աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն։
Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո՛ առ իս զունկն քո, յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լո՛ւր ինձ։
Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խուխ չորացան։
Հարայ ես որպէս խոտ, և ցամաքեցաւ սիրտ իմ, մոռացայ ուտել զհաց իմ ՚ի ձայնէ հեծութեան իմոյ։
Կցեցաւ ոսկր իմ ՚ի մարմին իմ, նմանեցայ ես հաւալուսան անապատի։
Եղէ ես որպէս բու աւերակի, տքնեցայ՝ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն ՚ի տանիս։
Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ, և գովիչք իմ ինև երդնուին։
Զմոխիր որպէս զհաց կերի, և զըմպելին իմ արտասուօք խառնեցի։

Յերեսաց բարկութեան սրտմտութեան
քոյ, զի դու բարձրացուցեր, և խո-
նարհեցուցեր զիս ։
Աւուրք իմ որպէս հովանի անցին, և
ես որպէս խոտ ցամաքեցայ ։
Դու տէր յաւիտեան կաս, և յիշատակ
քո յազգէ մինչև յազգ ։
Դու յարուցեալ գթասցիս ՚ի վերայ
սիոնի, ժամանակ գթալոյ նորա հա-
սեալ է ժամ ։
Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նր̃,
և ՚ի հողս նորա գթասցին ։
Երկիցեն հեթանոսք յանուանէ քում-
մէ, և ամ̃ թագաւորք երկրի ՚ի փա-
ռաց քոյ ։
Շինէ տէր զսիոն. և երևեսցի փա-
ռօք իւրովք ՚ի նմա ։
Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, և
ոչ արհամարհեաց զխնդրուած նոցա ։
Գրեսցի այս յազգ այլ, ժողովուրդ՝
որ ստացեալ է՝ օրհնեսցէ զտէր ։
Հայեցաւ նա ՚ի բարձանց ՚ի սրբութէ̃

իւրմէ, որ յերկնից յերկիր հայեցաւ ։

Լսել զհեծութիւն կապելոց, և ար-
ձակել զորդիս մահապարտաց ։

Պատմել ՚ի սիոն զանուն տեառն և
զօրհնութիս նր յերուսաղէմ ։

Ժողովել ժողովրդոց ՚ի միասին. և
թագաւորաց ծառայել տեառն ։

Պատասխանի ետ նմա ՚ի ճանապարհի
զօրութեան իւրոյ, զնուազութի ա-
ւուրց իմոց ասա ինձ. և մի՛ հաներ զիս
՚ի կէս աւուրց իմոց, զի յազգէ յազգ
են ամք քո ։

՚Ի սկզբանէ տր զհիմունս երկրի հաս-
տատեցեր. և գործք ձեռաց քոց եր-
կինք են ։

Նոքա անցանեն, և դու կաս՝ և մնաս
յաւիտեան ։

Ամենեքեան որպէս զձորձս մաշեսցին,
և որպէս զվերարկուս փոխեսցես զնո-
սա, և փոխեսցին ։

Բայց դու նոյն ես, և ամք քո ո՛չ ան-
ցանեն. որդիք ծառայից քոց բնակես-

ցին ՚ի նմա , և զաւակի նորա յաւիտեան
յաջողեսցի ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն՛ ։

## Սաղմոս. ՃԻԹ ։

Ի խորոց կարդացի առ քեզ տէր՝ տէր՝ լուր ձայնի իմում ։

Եղիցին ականջք քո , ՚ի լսել զձայն աղօթից իմոց ։

Թէ զանօրէնութիւնս քննես տէր՝ տէր , ո՞ կարէ կալ առաջի քո , զի ՚ի քէն է քաւութիւն ։

Վասն անուան քո համբերի տէր. համբերեր անձն իմ բանի քում . յուսացաւ անձն իմ ՚ի տէր ։

՚Ի պահէ առաւօտու՝ մինչև յերեկոյ ՚ի պահէ առաւօտու՝ յուսասցէ իսրայէլ ՚ի տէր ։

Զի տեառնէ է ողորմութիւն բազում , և ՚ի նմանէ է փրկութիւն , և նա փրկեսցէ զիսրայէլ յամենայն նեղութենց նորա ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն՛՛ ։

## Սաղմոս . ՃԽԲ :

Տէր լո՛ւր աղօթից իմոց , ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութ̄բ քով : Լո՛ւր ինձ արդարութեամբ քով , և մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում , զի ո՛չ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի :

Հալածեաց թշնամին զանձն իմ . խոնարհ արար յերկիր զկեանս իմ , և նըստոյց զիս ՚ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից :

Ձանձրացաւ յիս հոգի իմ , և սիրտ իմ խռովեցաւ յիս :

Յիշեցի զաւուրսն պառաջինս . խորհեցայ յամենայն ՚ի գործս քո . յարարածս ձեռաց քոց խորհեցայ , և համբարձի առ քեզ զձեռս իմ :

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ , փաղփաղակի լո՛ւր ինձ տէր , զի նուաղեցաւ յինէն հոգի իմ :

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն .

Նմանեցայց այնոցիկ, որք իջանեն 'ի գուբ։
Լուեալ արա ինձ յառաւօտու զողորմու-
թիւն քո. զի ես 'ի քեզ տէր յուսացայ։
Ցո՛յց ինձ Ճանապարհ՝ յոր գնացից, զի
առ քեզ տէր համբարձի զանձն իմ։
Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տէր,
զի զքեզ ապաւէն ինձ արարի։
Ուսո՛ ինձ առնել զկամս քո. զի դու ես
ա̃ծ իմ։
Ոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ 'ի
յերկիր ուղիղ։
Վասն անուան քոյ տէր՝ կեցուսցես զիս,
արդարութեամբ քով հանցես 'ի նե-
ղութենէ զանձն իմ։
Ողորմութ̃բ քով սատակեսցես զթշնա-
միս իմ. և կորուսցես զա̃մ նեղիչս ան-
ձին իմոյ, զի ես ծառայ քոյ եմ։
Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբ-
ոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յա-
ւիտենից, ամէն։

ՊԱԽՃԱՆ

A 158

Ինարիկ
158.